

634.9  
Ա-94

ՀՈՅՀ ԽԱՅԱՎԵԼԻԿՈՎՄԱՆԻ Սոց. Դաստիարակություն  
Հեղաշուրջներ աշխատ. զարոցի ուսուցչի համար

ԱՐ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

# ԱՆՏԱՐԻ ՈՐԸ

—

Պատմութիւն հետարարին ու քայլութիւն

1928 - Ցեղական

09 JUL 2013

634.9

Ա-94

Ար.

ՀՅՈՒՆ. ԼՈՒՍՈՂԿՈՄԱՔ Մոց. Դաստ. Գլխ. Պարշ.  
Զեռնարկներ աժխատ. գպրոցի ուսուցչի համար

ԱՌ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

11043

# ԱՆՏԱՐԻ ՈՐԸ



ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՄԱՐՄԱԿՀՈՒՐՅՈՒՆ

1928-Ցերեկան

20493

30 JUL 2010

### ԵԵՂԻՆԱԿԻ • ԿՈՂՄԻՑ

Այս բրոշյուրը կազմելիս, ոգտվել ենք ռուսերեն  
լեզվով վերջին տարիներում լույս տեսած գրականու-  
թյունից յիվ, առավելապես, հետյեվյալ յերկու աշ-  
խատություններից. П. Смолин — Подготовка к „дню  
леса“. Москва, 1927 г. стр. 68, С. Исаев — День леса,  
Москва, 1927 г. стр. 60.

Գրառեպվար 647 ր. Տ. 710

Տիրամ 3000.

Յերևան Պետհրատի լերկրորդ տպարան — 417

## I. ՄԱՐԴԸ ՅԵՎ ԱՆՏԱՌԸ

Մեր ալժմյան քաղաքացին, բնությունը հասկանալու և գնահատելու ունակությունն, համարյա թե չունի: Հազիվ քաղաքից կամ բնակավայրից անտառը գուրս գալով՝ նու մասնվում ե ավերման իր բնազդին, և, հաճախ, առանց վորեե չարամիտ դիտավորության, կտրատում ու վոչրնչացնում ե ծառերի մատղաշը, ճյուղերը, ընձյուղները, չհասած պտուղները, տերմները և, առնասարակ, ձեռքի տակ ընկած կանաչ բուսականությունը: Քաղաքի բնակիչը կանաչ բուսականության վորոշ պահանջ ե զգում, բայց այդ պահանջը հարմար դեպքում բարբարոս միջոցներով ե հագեցնում: Փոխանակ իր բնակավայրն առողջացնելու նպատակով՝ նրա կանաչ տարածության ընդացնելու գործին նվիրվելու, նա, ոգտվելով ամեն մի հարմար ու անհարմար առիթից, որինակ՝ զանազան տոնակատարություններից և կրոնական ծիսակատարություններից (ծառզարդար, հարսանիքներ և այլն), փոչնչացնում ե իր շրջապատի ծառատունիկերը:

Լոռու անտառապետության Մյասնիկյանի անվան սոճուտում 20 – 25 տարի առաջ տնկած սոճիների գաղաթները շրջակա գյուղացիները կտրել են հարսանիքների ծխակատարության համար և հիմա այդ արժեքափոր սոճենիներից շատերն այլանդակված են:

Մյուս կողմից՝ բնակավայրերն ու քաղաքները շրջապատող կանաչ բուսականությանը մարդիկ բոլորովին խնամքով չեն վերաբերվում: Անտառները, յերեխաները, հաճախ և հասուն մարդիկ այնպիսի մի կործանարար աշխատանք են կատարում նրանց վերաբերյալ, վոր այդպիսի բուսականություն գուցե հատուկ պահակների միջացով պահպանվող մասն և միայն ազատվում վոչնչացումից: Այդ ավերիչ աշխատանքի հետեւանքն այն և լինում, վոր մեղավոր ու անմեղ քաղաքացիների առաջ թռքախալ դռներն ավելի ու ավելի լայն են բացվում:

Անարդարացի կիներ կարծել, թե զյուղացիության վերաբերմունքը գեպի մեր անտառները սահմանափակվում ե վերոհիշյալ գործունեյությամբ միայն: Մինչդեռ մեր զյուղացիությունը այ ճյուղերում (դաշտավարություն, անտառապահություն, այգեգործություն և այլն) հանդիսանում ե գորպիս քիչ թե շատ խելացի անտես, անտառալին անտեսության վերաբերյալ

նա զիս նախնական հողագործի վաղեմի հոգեբանություն ունի, մի հոգեբանություն, գորով հողագործն իր շրջապատող անտառի հետ կյանքի և մահվան կոփեր մզում անտառի ձեռքից քայլ առ քայլ նոր հողամասեր գուրս կորզելու համար:

Մեր խօսքերն ապացուցելու համար, պիտի մատնանշենք քմահաճորեն կտրած այն անթիվ ու սրհամար ծառերի կոճերը, վորոնք փռված են մեր սակավաթիվ անտառների ամբողջ առածության սահմաններում և այն բազմաթիվ ողակումները, վոր նկատվում են հաճախակի անտառապին բացատների շուրջը: Իսկ անտառները: Նրանք արածում են ամենուրեք: Հատակեղերում, մատղաշներում և, մինչև անգամ՝ տնկարաններում ու անտառի բացատներում արհեստորեն կերպով տնկած մշակույթներում: Մշակույթները շրջապատող ամուր փշալարն անզոր և կանգնեցնելու անտառների գրոհը:

Իհարկե, կարելի յե առարկել, թե կարիքն է ստիպում զյուղացուն դիմել այդ միջոցներին: Անպայման, վորոշ չափով ձիշտ և այդ, բայց միայն՝ վորոշ չափով: Հայտնի յե, վոր մեր արոտներն ու անտառները համայն զյուղացիության կարիքները չեն բավարարում լիովին: Բայց պետք և նկատի առնել, վոր անտառի անհաշիվ կտրելը,

հատակեղերում, մատղաշներում, պաշտպանողական նշանակություն ունեցող անտառամասերում անտառներ արածացնելն ու ծառեր կարելը—միևնույն ե—գյուղացու պահանջներին ու կարիքներին հիմնովին բավարարություն չեն տալու։ Անտառների կերի հարցը լուծվում ե լերկրի բնդանուր տնտեսությունը կազմակերպելու, այլ վոչ թե անտառն արոտի վեր ածելու միջոցով։ Նույնպես ե, յեթե ամբողջ անտառը միանգամից կարվեր, հետագալում գյուղացիության կարիքները նորից չպիտի բավարարվելին, իսկ ազատված հողը շուտով պիտի անպետքանար և աշխատավորությունն ապագայում պիտի զրկվեր հիշալ տարածության վրա աճող փայտեղենի բերքից։

Կրակի հետ անզգույշ և անփուլթ վարվելու պատճառով, լուրաքանքուր տարի մեր անտառներից մեծ թվով փայտեղենն ե զոհ գնում հրդեհն։ Վոչ մի արդարացուցիչ միաք չկար այդ ակամա հրձիղներին հասարակական դատից պաշտպանելու։

Անտառավին գործն ունի յերկու կողմ. մեկը կապված ե անտառում տնտեսություն վարելու, անտառը պահպանելու և խնամելու հետ, իսկ մյուսը՝ անտառը շահագործելու։ Թեև այդ լերկու կողմերը սերտ կերպով կապված են միմյանց հետ, վորովհետև, յեթե անտառը չլինի՝ շահա-

գործելու ել վոչինչ չի լինի, այնուամենանիվ, դեռ մինչև որս ել շահագործման հարցերում գիշատղական բնագղներ են նկատվում։ Հատման տեղերում փայտեղենի մնացորդներ են թողնում, մի հանգամանք, վոր վասատուների (միջատների) տարածվելու և բազմանալու նպատագոր պայմաններ և հրդեհի վտանգ ե ստեղծում։ Հենց ծառերի հատումը կատարվում ե անկանոն։ Հատելուց հետո թողնում են բարձր կոճղեր, ծառեր վայր ձգելն, անփուլթ վարվելու պատճառով, կամ, գուցե և գիտակցաբար, կատարում են այնպես, վոր մի կտրած ծառն իր հետ ցած ե վլորում, կամ կոտրում ու փշացնում ե հաճախ 2-3 կանգուն ծառ։

Այս հանգամանքներում կարող եք պատկերացնել, թե անտառալին աշխատակիցների աշխատանքն ինչպիսի դժվար ու պատասխանատու պայմաններում ե ընթանում։

Առանց հասարակական լույն աջակցության, նրանց աշխատանքն անկատար ու թերի կմնաւ,

Վորեւե բացասական յերեսութի զեմ կովելու համար անհրաժեշտ ե ուսումնասիրել և պարզել նրա հիմնական պատճառները։

Յեթե հարց հարուցվի, թե վերև նկարագրված զրության պատճառն ինչ ե, ստիպված կլինենք պատասխանը վիճուել մարդկության

զարգացման պատմության մեջ, սոցիալ-դասակարգային յերևութների կարգում, ապա և այն կոնկրետ պայմանների մեջ, վորոնք գոյություն ունեն չ. Ա. Խ. Հ.:

Հեռավոր անցյալներում մարդկության գոյությունը սերտ կերպով կապված է յեղել անտառի հետ, վորը բավարարում եր նախաճարդ-վորսորդի բոլոր կենսական պահանջները: Հետագայում յերեան յեկագ մարդ-խաշնարածը և, կապելով իր բաղրը հովիտների ու տափաստանների հետ, խզեց անտառի հետ իր հարաբերությունը: Խաշնարածն անտառից կախում չուներ, նա առանց անտառի յել կարող եր իր գոյությունը պահպանել: Ըսդ-հակառակը, նստակյաց կյանք վարող հողագործն, իր մշտական բնակության համար շենքեր կառուցելու հետևանքով, սկսեց կապել անտառի հետ: Բացի գրանից, նստակյաց կյանքի ձեր մարդուն դրդեց նորից ֆնտոել անտառի հարեվանությունը՝ նրա մութ և խիտ խորքերում խաշնարած քոչվորներէ ասպատակություններից պաշտպանվելու համար:

Պատսպարզվելով անտառում, հողագործը հենց այնտեղ ել պիտի իր հողագործությամբ զբաղվեր: Յեվ, ահա, արտազրողական պահանջների ճնշման տակ հնչուն կացինն սկսեց փայլել դարավոր կանաչ ծառուտներում, և կարմիր կրակը մոխիր

դարձրեց հսկա ծառերը: Նրանց վլատակների վրա յերեացին արտերի գեղին ալիքները:

Ացպիսով, վորսորդական շրջանում անտառը մարդու համար վորսի աղբյուր եր և, իբրև ալղովիսին, անտեսավարական վոչ մի որչեկտ չեր կարող հանզիստնալ:

Զարգացման ավելի բարդ շրջաններում անտառը մարդու հետ կամ վոչ մի կապ չուներ, կամ թշնամին եր, նրա անտեսավարության արգելքը, վորը նա պիտի կործաներ իր արտազրողական նպատակին՝ հողագործությանը հասնելու համար: Նախնական այդ շրջանից մեր բնավորության մեջ մնացել և անտառ վոչնչացնելու սովորությունը:

Այդ սովորությունից մարդը շագատվեց և հետագայում: Յարական Ռուսաստանում ժողովրդական հարստությունը գտնվում եր իշխող գոսակարգի ձեռքին: Ան ժամանակ, յերբ աշխատավոր գյուղացիությունն զգում եր փայտեղնի սուր կարիք, նրա կողքին ահազին տարածությամբ անտառներ պատկանում եին առանձին կալվածատերերի ու թագավորական տոհմին: (Ուղելյան անտառներ): Հաճախ այդ անտառները բոլորովին չեին ոգտագործվում և մերձակա գյուղացիության զարուցն ելին հարուցում միայն:

Քաղաքներն ու բնակավացիրը շրջապատող ալղիների ու զբոսավայրերի մեծամասնությունը պատկանում եր բնակչության ունեոր ժաման. այդ պայմաններում կանաչ տարածությունները չքափոր աշխատավորության հասարակական գիտակցության վրա վոչ մի ազդեցություն չեցին կարող ունենալ, մասնավանդ, վոր աշխատավորությունը հաճախ այդ կանաչ տարածությունից ոգտվելու հնարավորություն չուներ:

Իմպերիալիստական պատերազմն ավելի ևս խորացրեց այդ ավերման բնազդը և խեղղեց շատերի մեջ, առհասարակ, վորեւ գույքի խնամքով վերաբերվելու ցանկությունը:

Պատճառների այս յերկար շղթան վերջանում և հետագայի ռազմա-հեղափոխական շրջանով և վառելիքի ճգնաժամով:

Այդպես ե բացատրվում անցյալից ժառանգություն ստացված՝ մեր անտառների ներկանմխիթար կացությունը:

Յեզ, ահա, այդ անցյալի ժառանգությունն ե, վոր պիտի թոթափենք մեղնից:

## II. «ԱՆՏԱՐԻ ՈՐՎԱ» ՆԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերեւում բերված բացատրություններով արդեն պարզվում ե «անտառի որվա» հիմնական նշանակությունը: «Անտառի որվա» կամպանիան

բնակչության լայն մասսաների գիտակցության մեջ հեղաշրջում պիտի առաջ բերի, դեպի ծառը դարելից մնացած թշնամական վերաբերմունքը բնաջնջ անի ու փոխի բարեկամական վերաբերմունքի: Ծառը վոչնչացնող թշնամուց՝ մարդը պիտի գառնա նրա խելացի, ոգտագործող բարեկամը: Զպետք ե մոռանալ, վոր ներկայումս Խորհրդային Հայաստանն իր կյանքի բոլոր ասպարեզներում լիբրեք չտեսնված վերելք ունի և այս, վոր թվում ե անկարելի, հավանական և իրականանա: Իշխող դասակարգի վոչնչացումը և բնության հարստությունների ազգայնացումը աշխատավորության գիտակցությունը բարձրացնելու հզոր ազդակը պիտի դառնան:

Անհրաժեշտ ե, վոր աշխատավորությունը հասկանա, գիտակցի և, վերջապես, ըմբռնի, վոր ծառերի պաշտպանությունն իրեն անմիջական շահն ե:

Նախապատերազմյան շրջանում Ռուսաստանում, իսկ ներկայումս և Յերսպայում ու Ամերիկայում, գոյություն ունեն ծառերի պաշտպանությունը հասարակական մասսաների միջոցով հոկազմակերպելու հոսանքներ, սակայն այդ հոկազմակերպությունը բարեգործական ծագում սահմանադրության հիմնականում բարեգործական ծագում ունեն: Նախորոք կարելի լի ասել, վոր Խորհրդունեն: Նախորոք կարելի լի ասել, վոր Խորհրդունեն լիբրկում հարցն այդպիսի ձևով լուծելու դալին լիբրկում հարցն այդպիսի ձևով լուծելու


փորձը դաստիարակուված և ամհաջողության։ Վոչ  
թե սանտիմինություն ու վողորմածու, այլ խելացի  
ու նպատակահարժար ոգտագործության ոկրգ-  
բունքներով ե զեկավարվում «անտառի որվա»  
կազմակերպման գործը։ Վոչ թե խղճակի վերա-  
բերմունքը այլ ողտակարության և արժեքի իմաստ  
ե անհրաժեշտ մացնել աշխատավորության զի-  
տակցության մեջ ծառերի և կանաչ բուսակա-  
նության վերաբերյալ, Գործն այդպիսի հիմքերի  
վրա գնելու գեպքում՝ հաջողությունն ապահով-  
ված ե։

Անհրաժեշտ ե մասնանշել վոր բնությունը  
պահպանելու գործը մեր յերկրությունը  
գոյություն ունենալ։ Սակայն այս գեպքում զե-  
կավարող սկզբունքը հետեւյալն ե, նախ քան բնու-  
թյան կյանքին միջամտելը (որ տնտեսություն  
կազմակերպելը), մարդս պիտի նրա կյանքն ու-  
սումնափրի, վորովհետեւ չմտածված գործունե-  
յությունը կարող է վատ հետևանքներ ունենալ,  
Այդ տեսակետից, մեր անտառամասերից միքա-  
նիսը կարող են հայտարարվել արգելված վայ-  
րեր՝ զիտական ուսումնափրություններ կատա-  
րելու հաժար։ Նույն այդ տեսակետից ել ներ-  
կայումս մեր կաղնու և սոճու ոգտագործու-  
թյունը սահմանափակված ե, վորովհետեւ այդ  
ծառերը վերանորոգվելու նշաններ ցույց չեն

տալիս, իսկ պատճառներն ուսումնասիրված չեն։  
Այդպիսով, «անտառի որվա» հիմնական  
նպատակը՝ աշխատավորության հասարակական  
զիտակցությունը վերափոխելու և անցյալի ծանր  
ժառանգությունը թոթափելու համար աշխա-  
տանքներ կազմակերպել և կատարելն ե, ինքն  
ըստ ինքյան, գժվարին նպատակ ե այդ, վորին  
հնարավոր և հասնել միայն մի շարք կոնկրետ հ  
գործնական խնդիրներ լուծելու միջոցով։ «Ան-  
տառի որվա» կամպանիալի ընթացքում աշխա-  
տավորության ուշագրությունը կենտրոնանում  
ե անտառի շուրջը՝ անտառի հետ կապված մի  
շարք հարցերի բազմակողմանի լուսաբանության  
ճանապարհով։

Խորհրդային Հայաստանն, իբրև սոցիալիս-  
տական արտադրության հիմքերի վրա կառուց-  
ված մի յերկիր, կարող է «Անտառի որվ» հաշ-  
վել իր արտագրական տոնը, վորպիսին աշխա-  
տավորության ուշագրությունը կենտրոնացնում  
ե յերկրի արտագրողական ուժերից մեկի վրա։  
«Անտառի որվա» կամպանիալի ընթացքում տե-  
ղի յի ունենում այն խնդիրների և պարտակա-  
զի յի ունենում ապահովագործությունների վերանայումը, վորոնք կանգնած  
են չ. Ս. Խ. Հ. կոլեկտիվ տիրոջ աշխատավո-  
րության առաջ, Խորհրդային Հայաստանի ան-  
տառների վերաբերյալ։

Դարավոր նախապաշտունքներն ու մռայլ,  
ծանրը ժառանգությունները փշրելու համար դա-  
տարկ խոսքերը բավական չեն. անհրաժեշտ է  
նաև դորձ: Յեթե միայն լավ և խելոք ճառեր  
ու խոսքեր արտասանվեն, առանց կենդանիք գործ  
կազմակերպելու, խոսքերը կմնան միայն խոսքեր.  
Իսկ գործը՝ նախկին դրության մեջ: Ապա, ու-  
րեմն, «Անտառի որը»-արտադրական տոն ե, գո-  
րի հաջողության մասին յեզրակացություն են  
անում ըստ նրա արտադրական արդյունքների:  
Յեթե «Անտառի որը» կանաչ, առողջ, մատղաշ  
ծառերով պատաճ. գոնե մի փոքրիկ հողամաս  
տա, տոնի ամենանպաստավոր ազիտացիան կի-  
նի այդ: Այդ տեսակետից արտադրական կողմին  
անհրաժեշտ ե առանձին ուշադրություն դարձ-  
նել: Գլխավորապես պիտի հոգ տանել վոչ թէ  
քանակով չատ աշխատանք կատարելու տի՛ փո-  
րակով: Յեթե ծառատունկ ե կազմակերպվում  
ապա պիտի տնկել այնպես, վոր բոլոր տունկերը  
կանաչեն և հետագայում ապահովված լինեն  
նրանց տճելու և զարգանալու պայմանները,  
ապապես՝ մասնակցողներն անհաջողության դեպ  
քում հեգնանքով կհեշեն տոնը: Ահա թէ ինչու  
«Անտառի որվա» արտադրական կողմի դրական  
արդյունքներն անհրաժեշտ ե առանձնապես ա-  
պահովել:



Նույն որվա ընթացքում անտառը և առհա-  
սարակ, կանաչ բուսականությունը պիտի կապել  
գեղարվեստական տպագորությունների հետ, ուն-  
տի և «Անտառի որվա» գեղարվեստական կողմը  
նմանապես շատ կարևոր ու եյտական պիտի հա-  
մարել:

Այս ամբողջ արտադրական աշխատանքները  
գրական արդյունքներով, հաջող կատարված գե-  
ղարվեստական ժամանակուր նպատակին  
հասնելու համար խոշոր նշանակություն ունեն:  
Կամպանիայի բովանդակությունն իր մեջ մի  
շարք զանազան հարցեր կարող ե պարունակել:  
Քաղաքում անտառը և նրա հետ կապ ունեցող  
խնդիրները վորոշ չափով յերկրորդական տեղ են  
բանելու: Այս գեպքում, կարեոր ե ցույց տալ  
փայտանյութի բազմազան գերը քաղաքի և նրա  
անտեսության պայմաններում: Անտառից հեռու  
վայրերում «Անտառի որին» մասնակցողներն,  
իհարկե, չեն կարող անմիջականորեն անտառա  
լին անտեսության հետ կապ ունեցող արտադրա-  
կան աշխատանքներ կատարել: Այդպիսի արտա-  
դրական աշխատանքները ներկա գեպքում կըն-  
թանան շրջակարի ծառատունկերի և կանաչ  
տարածությունների վայրերում աշխատանքներ  
կատարելու գծով:

Ընդհանուրապես, կարելի լի ասել, վոր կամ-

պանիան ընգրկելու յե հետեւալ հարցերը: Ծա-  
նոթություն ծառերի կյանքին, ծառի դերը մար-  
դու տնտեսության մեջ, ծառի առողջապահական  
նշանակությունն՝ իբրև տարածվող փոշու առաջն  
առնողի և իբրև թթվածինի գործականի, Խոր-  
հրդային Միության և Խորհրդային Հայաստանի  
անտառների քանակությունը, կազմը, դրությունը  
և տարածությունն ըստ շրջանների (անտառա-  
զուրկ և անտառաշատ), անտառների նշանակու-  
թյունը Խորհրդային Միության և Խորհրդային  
Հայաստանի անտեսության մեջ, Խորհրդային  
Հայաստանի անտառային անտեսության հերթա-  
կան խնդիրները, կոմմունալ անտեսության աշ  
խատանքներն ու խնդիրները կանաչ տարածու-  
թյուններ ստեղծելու ասպարիզում:

Մյուս կողմից, պետք է դրվեն հետեւալ  
հարցերը. մասսայականացնել ծառատունկերին խե-  
լացի վերաբերմունք ցուց տալու անհրաժեշտու-  
թյունը, ներդրավիլ լայն մասսաները ծառատուն-  
կեր ստեղծելու արտադրական աշխատանքների  
մեջ, բնակչությունը կազել ծառատունկերը խը-  
նամելու (այդիների, պուրակների, անտառների  
մաքրելը փայտեղնի զանազան մնացորդներից)  
աշխատանքների հետ, ծառատունկերի պահպա-  
նություն կազմակերպել կազմակերպել ծառա-  
տունկերի մշակական խնամք, կազմակերպել պայ-

պար անտառային վաստառուների և թշնամինե-  
րի դեմ:

Բոլոր հարցերը միանգամից, պարզ ե, ան-  
կարելի յե իրազործել: «Անտառի որ» կազմա-  
կերպողներն ընտրում են թված հարցերից այն  
հարցերը, վոր իրազործելու ավելի հարժար են,  
անհրաժեշտ ու հեշտ: Վորոշ դեպքերում, որի  
նակ, յեթե անկվելիք ծառերը պահպանելու և  
աճեցնելու հնարավորություն չկա, ինչքան ել  
ծառեր տնկելու ցանկությունը ուժեղ ու գրա-  
վիչ լինի, այնուամենայնիվ, պիտի խուսափել  
տնկելուց և ամբողջ աշխատանքը պետք ե կենտ-  
րոնացնել արգելքների պատճառները վերացնե-  
լու վրա:

Բացի իր անժիշտական նշանակությունից,  
«Անտառի որը» խոշու դաստիարակչական մո-  
մենտ ե՝ դեպի շրջապատը կուլտուրական վե-  
րաբերմունք և աշխատավորական սկզբունք  
ստեղծելու համար: «Անտառի որը» Խորհրդային  
կուլտուրայի համար պալքար մղելու ետապնե-  
րից մեկն եւ:

### III. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Արտադրական աշխատանքները բաղմաթիվ  
և բազմատեսակ են: Սխտեղ բերում ենք այդ  
աշխատանքների որինակելի մի ցուցակ, չսահ-

մանափակելով «Անտառի որ» կաղմակերպողների ընտրությունը վճ քանակի և վոչ ել ձեերի տեսակետից: Բոլոր արտագրական աշխատանքները կապված են յերկու հիմնական լողունգների հետ. ա) «Անտառի որը»—անտառալին տնտեսության համար պայքարելու որ ե». բ) «Անտառի որը»—աշխատավորության առողջության համար պայքարելու որ ե:

Անցնենք աշխատանքների ցուցակին:

1. Տնկում են ծառեր՝ ակումբների, դըպըցների, խրճիթ-ընթերցարանների, մարմնամարզական և մանկական հրապարակների շուրջը, փողոցների յերկարությամբ, զբոսավայրերում, պուրակներում, հասարակական ալգիներում և այնու կարեոր ե առաջին հերթին ի նկատի առնել բանվորական ծայրամասերը: Քաղաքի բնակչության առողջապահության համար կանաչ բուսականության խոշոր նշանակությունն արդեն կասկած չի հարուցում: Յեթե համեմատենք զանազան քաղաքների կանաչ տարածություններն ու մահացությունը, կտեսնենք՝ վորքան կանաչ տարածությունը շատ ե, այնքան մահացությունը՝ քիչ:

2. Հրդեհների առաջն առնելու համար՝ շենքերի շուրջը ծառեր տնկել:

Շենքերի շուրջը գտնվող ծառերը պաշտ-

որանում են այդ շենքերը հրդեհներից, վորով հետեւ հարկան տներից թոշող կրակի կալծերն ընկնում են ծառերի գաղաթներին ու ձյուղերի մեջ և հանգչում: Ծառերը կարող են բռնկվել միայն այն դեպքում, յեթե չորացած են, իսկ կանաչ ծառը կրակի կալծերից շուտ չի չորանա: Ռուսաստանում նկատված են դեպքեր, իերը ալրփող ամբողջ գյուղից ազատվել ե ծառերով շրջապատված մի տուն միայն: Այդպիսի տները դարձել են հրդեհների դեմ կովելու որինակներ, և յրջակա բնակչությունը լայն կերպով ոգտվում ե այդ յերկութից՝ բոլորն իրենց տների շուրջը ծառեր են տնկում: Այդպիսով, անկառկած կարող են ասել, վոր կանաչ ծառերը հական ըդհաջին նշանակություն ունեն:

3. Իմպերիալիստական կռիվների և սնիշխանության ընթացքում գյուղերին և ճանապարհներին մոտիկ գտնվող անտուռամասերում տեղ տեղ կտրված են մեծ քանակությամբ ծառեր: Վորովհետեւ այդտեղ անասուններ արածելու պատճառով այլևս ծառեր չեն բռւանում ու այդ տարածություններն անպետքանում են, առհասարակ, զյուղատնտեսական և այլ ոգտագործութների համար, ուստի կարեոր և ոգտակար աշխատանք կլիներ ալդտեղ ծառեր տնկել: Տընկելուց հետո ծառերն անհրաժեշտ ե պաշտպա-

նել անտառուններից և յերթեեկող ձանապարհորդ ներից: Այդ նպատակով տնկած ծառերը կարելի է շրջապատել փշի, բարի, հողի և աղ ցանկապատերով:

4. Հայաստանի անտառային շրջաններում յերբեմն կարելի յի նկատել հետեւալ յերեսովթը: Գյուղի մոտի կամ շրջակաքի աղբյուրներից մեկն ու մեկը ցամաքել եւ: Վոչ մասնագետն ել կարող և հարց ու փորձից պարզել, վոր աղբյուրը ցամաքել և վերեկի անտառը կտրելու պատճառով: Փաստը հաստատելու դեպքում, տուժած տարածության վրա ծառատուննել և կազմակերպվում:

5. Անտառը խնամելու աշխատանքներ: Այդպիսի աշխատանքների թվին են պատկանում մատղաշ ծառերն ու հատատեղերը պատրաստած փայտեղենի մնացորդներից մաքրելը, անտուններից պաշտպանելու համար ցանկապատերը և աղն: Փայտեղենի մնացորդները, կուտակվելով հատատեղերում, մի կողմից՝ խոչընդուռ են հանդիսանում մատղաշի աճման, մյուս կողմից՝ հրդեհի և վնասատու միջաների վտանգ ևն ստեղծում: Բացի գրանից՝ մեր անտառներում քամու գցած ու կոտրած և ինքնակամ կերպով կտրած ծառերի մնացորդներ հազվադեպ չեն: Դրանք նույնպես անտառում մնալով հրդեհի և

վնասատունների վտանգ են ստեղծում: Կանոնավնասատունների վտանգ են ստեղծում: Վահանջում է վոր անտառային անտեսությունը պահանջում է այդպիսի մնացորդներից անտառը մաքրել, հակառակ դեպքում՝ անտառի հաջող վերականգնումը խանդարվում է:

Մեծ նշանակություն ունեն անտառը (մանավանդ հատատեղերը) անտառններից պաշտպանելու միջոցները: Անասունը կրծոտում, տրուրում ու վոչնչացնում եւ շիվերը, ծիլերը, բուրակները և մատղաշ ծառերը: Մատղաշ ծառերն ու բուսակները կամ բոլորովին դադարում են աճելուց կամ աճում են շատ դանդաղ, այլանդանձելուց կամ աճում են շատ դանդաղ, այլանդանձին անտառամասեր փրկելու համար, կարելի լի յեւ այդ տարածությունները ցանկապատել: Այդպիսի աշխատանքներ կարելի յեւ կազմակերպել կամ ինքնուրուցին կերպով կամ զրա հետ միացնելով նաև ցանկապատված տարածության վրա ծառեր տնկելու աշխատանքներ: Այդ դեպքում ծառեր տնկելու աշխատանքները լավ են հանձնարեկ փոքրերին, իսկ ցանկապատերու աշխատանքները՝ հասակավորներին, վորոնք ծառատնկման աշխատանքներին նույնպես կարող են մասնակցել սակայն ավելի սահմանափակ կերպով:

6. Թոչուններ գրավելու աշխատանքներ:

Զպետք ե մոռանալ, վոր թոշունների մեծ մասն անտառների բարեկամներն են: Նըսնք վոչնչացնում են ծառի վնասատուներին (միջատներին) և հաճախ փրկում են զատապարտված ծառը մահից ու աղատում հարևան ծառերը վարակվելոց: Թոշուններին գրավելու համար շինում են բներ և ծառերից կախում, ստկայն անհրաժեշտ ենկատի առնել, վոր այդ բներում թոշուններն առաջիկա տարում են բնակվելու, ուստի այդ աշխատանքը դեռ վաղ զարնան կամ ձմեռվա ընթացքում պիտի կատարել: Խիռ թփուններն ել են շրավում թոշուններին այնտեղ՝ բներ շինելու համար, այդպիսի թփուններ ստեղծելու գործը՝ թոշուններին գրավելու միջոցներից մեկն ե:

7. Աշխատանքներ անկարանում: Ծառեր տնկելու համար անհրաժեշտ ե ունենալ տունկեր, վոր ձեռք են բերում կամ անտառից, կամ նախորոք սերմից աճած մատղաշ ծառից: Անտուից տունկ ստանալն աննպատակահարմար ե, վորովհետև այնտեղ նա արդեն իր տեղումն ե: Ուրեմն մնում ե, վոր մատղաշ ծառերը տնկարանից տեղափոխվեն նոր մշտական վայրեր: Տնկարանն այդպիսով «Անտառի որվա» կենտրոններից մեկն ե զատնալու, ուստի այնտեղ աշխատանք կատարելը միանգամայն անհրաժեշտ ու կարևոր ե: Տնկարանում կարելի լե սերմեր

ցանել ըստ սակնելի տեղափոխել մարդերից «զըմ-ըոցը» (ալդպեօ ե անվանվում տնկարանի մի հատուկ մասը, վորաեղ մատղաշ ծառերը 1—2 տարի տառում ու պատրաստվում են մշտական վայրեր տեղափոխվելու համար) ու բարգենու և տունու շիվեր տնկել (տես մեր հավելվածները): Այլ աշխատանքներ, ինչպիսին են քաղհանը (մոլիխոտար արմատափիլ անելն) և մարդեր մշտիկը «Անտառի որվա» համար աննպատակահարմար պիտի համարել, վորովհետև այդ աշխատանքները վորոշ հետաքրքրություն ու աշխույժ չեն զարթեցնում մամնակցողների մեջ: Այդ աշխատանքները հարմար ե նախորոք կատարել, իբրև նախապատրաստություն «Անտառի որվա» համար:

8. Աշխատանքներ դպրոցի հողամասում: Բացի ընդհանուր աշխատանքներից, ցանկալի լե «Անտառի որվա» կամպանիալի հետ կապել նաև դպրոցական հողամասերի վրա կատարվող հետեւալ աշխատանքները.

ա. Տնկարան հիմնելը: «Անտառի որ» կազմակերպելիս, հաճախ տունկեր են պահանջվում և տունկերի մեծ պակասություն ե զգացվում: Ավելի լավ է այդ պահանջը բավարարելու համար դպրոցներում նախորոք կամ նույն այդ որը տնկարաններ հիմնել: Մեծ տարածություն պետք չե տնկարանի համար, կարելի լե մի քանի քա-

ռակուսի մետք առլածությունից մի քանի հարյուր 1—2 տարեկան զանազան տեսակի առնելիքը ստանալ: Յեթե հնարավոր չե ընդարձակ անկարան հիմնել, կարելի յե բավականանալ մինչև անգամ մեկ մարգով: Կարեռ և միայն անկարանը կամ մարգը շրջապատել ցանկապատով: Տնկարանում ցանում են զանազան տեսակ ծառերի սերմեր, այդ սերմերից զուրս յեկած բուսակները 1—2 տարի խնամվում են և հետո տեղափոխվում (անկում են) մշտական աճելու տեղերը: «Դպրոցներում» կարելի յե տնկելնու և վայրի տունկեր ու բարդու և ուռենու շիվեր: (Մանրամասն տես հավելվածներում): Տնկարան հիմնեն ու նրա մեջ կատարվող աշխատանքները կարելի յե կազմակերպել մի քանի դպրոցների կողեկտիվ ո. ժերով:

բ. Դպրոցի հողամասը ծառերով և թփերով շրջապատել: Շատ ցանկալի յե դպրոցական հողամասը շրջապատել այնպիսի ծառերով և թփերով, վոր միաժամանակ նրանք թե զարգարեն հողամասերը և թե դիտողությունների նկութ տան յերեխաներին: Հեռավոր և մերձակա եքսկուրսիաների ժամանակ, առիթից ոգտվելով, անհրաժեշտ է յերեխաներին հետաքրքրող ծառերի և թփերի պտուղներն ու սերմերը ժողովել և ցանել հողամասում, դպրոցի պարտեզում

կամ տնկարանում: Ցանկալի յե նաև հողամասում ցանել ու տնկել մեղրատու ծառեր ու թուփեր (լորենի, ուռի և ալին):

գ. Դպրոցի հողամասում մրգի ծառեր ու հատակատուղներ տնկելու աշխատանքներն ել կարելի յէ կապել «Անտառի որվա» կամպանիաի հետ: Ալդ աշխատանքները կատարվում են վաղ գարնան, շատ զգուշ և ուշիմ:

դ. Թոչուններ գրավելու համար ծառերի վրա կախ են ատալիս բներ և հողամասում տրնկում են թփեր (որինակ՝ մոշ): Նշանակությունը բացատրված ե վերեռում:

Յեթե վերոհիշտալ աշխատանքները դպրոցները կատարեն մինչև լնդհանուր տոնը, ապա տոնին և լնդհանուր արտադրական աշխատանքներին յերեխաներն ավելի պատրաստված և զիտակցորեն կմասնակցեն:

#### IV. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Պիտի շեշտենք, վոր «Անտառի որվա» հաջողությունն, անպայման, կախված ե նրա նախապատրաստական աշխատանքներից: Վորքան շուտ սկսվեն այդ աշխատանքներն, այնքան լավ նազ սպասարաստական ուշխատանքներն ընթանալու յեն մի քանի ուղղություններով:

## Ա. ԱԳԻՏԱՑԻԱ. ՅԵՎ ՊՐԱՊԱԴԱՆԴԱ

Այս ասպարիզում գոյություն ունեն հաստուկ միայն «Անտառի որվա» ընթացքում կազմակերպվող ադիտացիա և յերկարաւե պրոպագանդա: Գերադասելի յե յերկրորդ տեսակի պրոպագանդան: Հարմար ե սկսել այդ տեսակ աշխատանքները դպրոցի աշակերաների և պիոներների մեջ: Հետզհետե պրոպագանդան ծավալվելու յե նաև չափահատ բնակչություն մեջ: Դպրոցում ծառի նշանակության պրոպագանդը մտնում ե ամբողջ ծրագրի մեջ: «Անտառի որվա» պրոպագանդը սկսվում ե զեռ նախադպրոցական հասակից: Այդ շրջանում յերեխալին առաջին անգամ ծանոթացնելով ծառին, սովորեցնում են՝ խնամքով և բարեկամական վերաբերմունք գեղի ծառը: Ուսման առաջին տարիներում այդ աշխատանքը շարունակում և վերջնականորեն ավարտում են:

Սեղոնային յերեսու թներն անցնելիս, յերեխաներին ծանոթացնում են ծառի սեղոնային կյանքին և կապում զբա՞հետ «Անտառի որվա» կամպանիա ժամկետը:

Աշխատանքի պրացեսսներ կազմակերպելիս, շատ նպատակահարձար ե, համապատասխան հարմարություններ ունենալու գեպքում, յերեխաների ուժերով զոնե փոքր աարածությունների վրա, ծա-

ռեր անկելու և սերմեր ցանելու գործ կազմակերպել: Այդ աշխատանքների ընթացքում յերեխաները փորձ ձեռք կբերեն, և «Անտառի որվա» աշխատանքների համար արդեն պատրաստված կլինեն:

Գավառն ուսումնասիրելիս, յերեխաները կանգ են առնելու կանաչ տարածությունների վրա: Այդ լինելու յե հետագայում «Անտառի որվա» կազմակերպվելիք կամպանիային հասարակական գծով մասնակցելու մոմենտ:

Աշխարհագիտությամբ զբաղվելիս կարելի յե շոշափել յերկրագնդի անտառալին հարստությունները և վերջիններին ըստ առանձին պետությունների դասավորելու հարցերը: Այդ հարցերի հիման վրա կարելի յե մոտենալ ծառատական հարցերին: Յերկրագնդի բոլոր անտառների մի յերրորդ մասը պատկանում ե Խորհրդագլուն Միության: Այդ խոշոր հարստության առացման աշխատանքները կապված են նաև ծառատական պնկելու հետ: Խորհրդագլուն չայսատանն իր վեր պնկելու հետ Խորհրդագլուն հայտառան իր փոքրաթիվ ու քայլայված անտառներով մըտնելով Խորհրդագլուն Միության կազմի մեջ, սպանելով պնկելուն գործարան կամպանիային վերին, ողի վերից անցնելու յե արտադրողի դերին, ոտքի գերից անցնելու յե արտադրողի դերին, միջականորեն շահագրգուված ե:

Բուսաբանություն անցնելիս, կարելի յե լու-

սաբանել «Անտառի որվա» խնդիրները և յերկարատես նախապատրաստական արտադրական աշխատանքներ ձեռնարկել:

Այն գեղջում, յերբ «Անտառի որվ» մտնում է գպղոցի ծրագրի մեջ իբրև ինքնուրույն թեմա, կարելի յե խորանալ անտառային տնտեսության հարցերի ըննության և ուսումնասիրության մեջ, նախապատրաստելով աշակերաներին մոտենալու «Անտառի որվա» արտադրական աշխատանքներին անտառային տնտեսության պահանջների տեսակետից:

Սոցիալական առողջապահության հարցերով զբաղվելիս շատ հարմար է շոշափել քաղաքի, բնակավայրի կամ գյուղի՝ սոցիալական առողջապահության մեջ գրավող կանաչ տարածությունների նշանակությունը։ Այսուեղից, բնականաբար, պիտի անցնել բնակավայրում կամ նրա շրջակայքում «Անտառի որվա» կամզանիայի կազմակերպվելիք ծառատնկման աշխատանքներին։

Վերջապես, եվոյուցիսն տեսության հարցերով զբաղվելիս, հաճախ կարելի յե հիմնվել անտառային այնպիսի նյութերի վրա, վորոնք հետագայում պարզաբանելու յեն արտադրական աշխատանքների առանձնահատկություններն, որինակ՝ չնայած բնական սերմնավորումը (վերանորոգումը) գերազանելի յե, կարիք է զգացվում

արհեստական միջոցների (ծառեր, անկելու, սերմեր ցանելու) գիմել, անկարաններում ցանվող սերմերի ու հետազայտմ աճող բույսերի քանակությունը, մարգերից «գպղոց» առնկեր փոխագրելու պրոցեսի իմաստը և այլն։

Բնության ընդհանուր կենսաբանական փոխհարաբերությունները պարզաբանելիս, կարելի յե կանգնել ծառի և նրա թշնամիների վասատու միջատների, ապա և վերջիններին վոչնչացնող թաշունների փոխհարաբերությունների վրա։ Այդպիսով ստեղծվելու յե անտառի թոշուններ զբավելու աշխատանքներին մոտեցնելու անհրաժեշտությունը։ Հետաքրքիր է նուև ծառերի գոյության կոիմը անտառում, այստեղից կարելի յե անցնել անտառի տնտեսական նշանակությանը։

Թեև, ընդհանրապես, «Անտառի որվա» նախապատրաստական աշխատանքները գպղոցնենում բնագետ և գյուղատնտես ուսուցիչների գործն և լինելու, այնուամենահնիվ, հասարակագիտության ուսուցիչները նույնպես մասնակցելու յեն այդ աշխատանքներին իբրև դասակարգային արտադրողական տոնից՝ հակագրելով «Անտառի որվ» բուրքուական հասարակության կրօնական տոններին։

Դպրոցի ագիտացիոն աշխատանքներին մեծ

զարկ կարող են առ ցուցահանդեմներում կազմակերպվող անտառային անկյունները, արգավիսի անկյուններ կազմակերպում են անտառի բարեկամների խմբակները, պիոներները, նաև անտառալիսաների խմբակները, վերջապես, գլորոցի առանձին խմբերը։ Ազիտացիայի համար կարող են ողտագործվել նաև գլորոցից դուրս կազմակերպելի անկյունների համար։



Նկ. № 1. Անտառի անկյունը 1927 թ.  
Հարաբիլիսալի գլորոցական ցուցահանդեմներ:  
մակերպված ցուցահանդեմներ։  
Այստեղ (նկ. 1.) նկարված ե 1927 թ.

նոյեմբերին Հոկտեմբերյան հեղափոխության 10 ամյակի տոնին Դարաբիլիսալի ցուցահանդեմների անկյունը ցուցահանդեմների անկյունը, կազմակերպված Դարաբիլիսալի տնտեռության կողմից։ Այսպիսի ցուցահանդեմներում կարելի յէ բազմատեսակ և շատ նկութ գտնել՝ «Անտառի որվա» նախապատրաստական աշխատանքների համար։

Պիոներական գծով անտառային պրոպագանդը կարելի յէ իրազործելիքնչպես մշտական աշխատանք, բայց ավելի զյուրին և հարմար մոմենտը՝ պիոներների լազերալին (ճարարատին) շրջանն է։ Այդ շրջանում պիոներները հաճախ շփում են անտառի հետ և հստակորություն ե ստեղծվում անմիջապես ծանոթանալ ծառի կրանքին, նրա թրշնամիներին և բարեկամներին։ Միաժամանակ այդտեղ կարելի յէ ծանոթանալ անտառի տնտեսության, նրա պահանջներին և կարիքներին։ Հրդեհի դեպքում՝ պիոներները կարող են լուր հասցնել անտառապահներին և մասնակցել հրդեհի հանդցնելու աշխատանքներին։ Ծանոթանալով լազերալին շրջանում անտառի կյանքին, պիոներներն իրենց ստացած փորձից ոգտվելու յէն հետագա հաս սրակական աշխատանքների ժամանակը, կազմակերպելով գլուղական լերի տարրությունը տեղական նշանակություն ունենալու մասին պատճենը հանդիսանում է անտառի պահպանը։

ցող անտառներում կատարվող անտեսության շուրջը: Պիռներ-խմբակները կարող են ծանոթանալ անտառին նաև երսկուրսիաներ կազմուկերպելով: Բացի դրանից, նրանք կազմակերպում են իրենց բնակավայրում և նրա շրջակալիքում գտնվող կանաչ տարածությունների պաշտպանության գործը և կոմունալ անտեսության այդ ուղղությամբ կատարվող աշխատանքի մեջ ակտիվ մասնակցություն եւ ցույց տալիս Առհասարակ, «Անտառի ուժ» խսդիրներին մեկը՝ ծառաստանների բազմակողմանի նշանակության լայն ազիտացիան եւ, ուստի և գպրոցը, պիռներները և այլ հասարակական կազմակերպություններն, ըստ հնարավորության, իրենց ուժերը չըպիտի ինային լայն ազիտացիոն կամպանիա կազմակերպելու համար:

Աղիտացիոն և պրոտագանդիստական աշխատանքներ կարելի յե կատարել նաև չափահատ բնակչության մեջ: Ճիշտ եւ, այս գեպքում աշխատանքները գպրոցում և պիռներների մեջ կատարվող աշխատանքների թափին չեն հասնելու և սահմանափակվելու յեն զրույցներով, դասախոսություններով և գեկույցներով: Սակայն բնակչության վորոշ խմբերում հաճախակի կարելի յե անտառակին պրոպագանդը լայն հիմքերի վրա դնել: Հաջող կազմած պլակատները կենտ-

րոնացնելու յեն բնակչության վորոշ մասի ուշագրությունն անտառակին հարցերի շուրջը: Մանատորիաների և հանգստյան տների շրջաններում «Անտառի որվա» կամպանիային մասնակցող գպրոցները նարակալիքություն ունեն լուսաբանելու ալիք հիմնարկներում հանգստացողներին կանաչ տարածությունների նշանակությունն առողջապահության տեսակետից: Այդ լուսաբանությունը, բնականաբար, վերջանալու յե կանաչ տարածությունները լայնացնելու և պաշտպանելու կազմով:

Դպրոցի պրոպագանդին խոշոր ոգնություն են ցույց տալու բժիշկները: Այժմէան բժշկությունը ձգտում է կանխել հիվանդությունները, ուստի և կանաչ տարածությունների պաշտպանության ունրանց առողջապահական նշանակությունը լուրջ տեղ են զրավելու բժիշկների աշխատանքի մեջ: Անտառակի պրոպագանդն առանձին նշանակություն ե ստանալու հակաթոքախտային կամպանիայի ժամանակի:

Ֆիզիուլառուրայի խնդիրները սերտ կերպով կապված են կանաչ տարածությունների տուղջապահական նշանակության հետ: Այս հանգամանքն անհրաժեշտորեն պիտի զիտակցեն ֆիզիուլառուրայի տուպարիզում բոլոր աշխատողները և լայն աջակցություն ցույց տան «Անտառի որ-

վա» թե ազիտացիոն և թե կազմակերպչական աշխատանքներին։ Բացի գրանից, նրանք հնարավորություն ունեն տոնի գեղարվեստական մասը ճոխացնելու իրենց սպորտիվ խաղերով։

Բացի վերոհիշյալ խմբերից, շատ ցանկալի յե գրավել այնպիսի աջակիցներ, վորոնք կազմակերպեն աշխատափրական լայն մասսաները տոնի շուրջը։ Հիմնալ կմերի տեղկոմներն իրենց կողմի մեջ ունեն լուրտ-կրթական հանձնաժողովներ։ Այդ հանձնաժողովների միջոցով կարելի յե «Անտառի որվա» ազիտացիոն աշխատանքները, մասսայականացնել և ակուգրներում ու ընթերցաբաններում մի շարք գրուցներ, դասախոսություններ և զեկուցներ կազմակերպ։

Դպրոցներն իրենց հերթին ազիտացիոն աշխատանքներ կարող են կատարել անմիջապես աշակերտների ծնողների մեջ՝ ընդհանուր ժողովների միջոցով։

Դուրսում ազիտացիոն աշխատանքների համար կարելի յե ոգտագործել դպրոցի շենքը, խրճիթ-ընթերցաբանը, և, վերջապես, դուրսիսորհի և դուրսի ընդհանուր ժողովները։ Այս զեկուցում անհրաժեշտ ե, զլիսավորագես, կանգնել «Անտառի որվա» նշանակության տնտեսական կողմի վրա։

Ենչպես տեսնում ենք, ազիտացիոն և սլո-

պագանդի աշխատանքների համար մեծ հընարավորություններ և ավալներ կան։ Սակայն այդ աշխատանքների հաջողությունը կախված է պատրաստված, գործին ծանոթ և հմուտ ակտիվի գոյությունից։ Հետևաբար, բնական ե, վորաշխատանքներն սկսվեն քչից և աստիճանաբար լայնանալով, ընդգրկեն աշխատավորության նորանոր մասսաներ։ Այդպիսի ձևն ու կարգն ավելի հարմար ու ցանկալի յե։ Սակայն աշխատանքի մինիմում պիտի համարել՝ տոնին մասնակցողների զիտակից վերաբերմունքն, այսինքն, ոլոր մասնակցողների մեջ գոնե նախորոք կարծատե ազիտացիոն աշխատանքը պարտադիր ե։ «Անտառի որվին» մասնակցողների մեջ ազիտացիոն աշխատանքները կատարում են յերկու կերպ։ առաջին, ավելի տեսղական տեսակի աշխատանքները նպատակ ունեն պատրաստել ակտիվ-հրահանգիչներ, յերկրորդ տեսակի ավելի կարճատե աշխատանքները կազմակերպվում են՝ մասսայական մասնակցողներ պատրաստելու համար։ Հիմնականն այն ե, վոր տոնին մասնակցող լուրաքանչյուր անհատ «Անտառի որվա» նշանակությունը, ինչիքներն ու նպատակները պարզ և փորոշ պատկերացնի։

## Բ. ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ագիտացիոն և պրոպագանդային աշխատանքները հաջող կատարելու համար անհրաժեշտ ե ընդհանուր հարցերը լուծել շրջանի կանաչ սարածությունների և անտառների կոնկրետ ու փստացի տվյալների հիման վրա։

Մյուս կողմից, ծառի և անտառի կրանքն ուսումնասիրելու համար բավական չեն միայն բանավոր գեկուցներ, զրուցներ և այն։ Անհրաժեշտ ե նախապատրաստումն ընդլանել եքսկուրսիաների և արտադրական գործնական աշխատանքների ձևով։ Եքսկուրսիոն աշխատանքները կարող են ընթանալ յելեք ուղղություններով։

Առաջին՝ առանձին ծառերի և անտառի կյանքի ուսումնասիրություն։ Այս դեպքում անհրաժեշտ ե ծանոթանալ ծառի կյանքի սեզոնալին յերեսութներին և շրջակա անտառի ընական վերանորոգման պրոցեսսին։ Այսաեղից կարելի յե բնականորեն անցնել արհեստական միջոցներով անս առի վերանորոգմանն աջակցելու անհրաժեշտությանը, տեղում համոզվել, վոր անսուններ արածացնելը քայլալիչ հետեանքներ և ունենում և պարզաբանել անտառ-կուլտուրական աշխատանքների նշանակությունը։

Հետաքրքրական ե՝ հակազրել անտառն ու առանձին, միայնակ աճող ծառերը, պարզաբանելով, թե ինչպես ծառերի փոխադարձ ազդեցությունը միմյանց վրա ոգնում է մարդուս լավ տեսակի փայտեղեն աճեցնել։ Հետաքրքիր ե նաև պարզաբանել զանազան կենսաբանական հատկություններն ու պահանջները։ ալդ ուսումնասիրության գործնական նշանակությունն այն ե լինելու, վոր եքսկուրսիային մասնակցողների համար կպարզվի, թե այս կամ այն աեսակ ծառն իր աճելու համար ինչ պայմաններ ե պահանջում։

Յերկրորդ տեսակի եքսկուրսիոն աշխատանքն՝ անտառի տնտեսվարական հարցերին ծանոթանալը պիտի համարել։ Այստեղ կարելի յե մատնանշել հետեւյալ նյութերը։ ծառերի հասակը, սկզբում ավելի ընդհանուր գծերով, որինակ՝ մատղաշ, հասունացող, հասած և ուժապատ ծառեր։ Հետազայում կարելի յե ավելի մանրամասն վորոշել ծառերի հասակը՝ բաժանելով առանձին դասերի, յուրաքանչյուր դասը 20 տարի։ Ծառի հասակն արտաքին տեսքից վորոշելիս, լավ ե զուգընթացաբար նաև կտրած կռազերի տարւ կան ողակների համրաքով վորոշել։ Հետո կարելի յե փորձել՝ վորոշել անտառի խտությունը, տեսակական կազմը և տեսակնե-

ըի հալաբերությունները։ Վերջապես, կտրելի յե վորոշել նաև հիվանդ, փչացած և վնասված ծառերի բանակը։ Բոլոր վերոհիշյալ տվյալների հիման վրա վորոշում են անտառաժամի տրժեքավորությունը։

Յերրորդ տեսակի էքսկուրսիոն աշխատանքն՝ անտառաժամում կատարվող անտեսության հետ ծանոթանալն է։ Այս գեզքում ձըդտում են ըմբռնել, թե ի՞նչպես ե զոյացել ներկալումս հետազոտվող անտառաժամափ պատկերը։ Որինակ, յեթե անտառաժամում վերանորոգում ե նկատվում, այսինքն, առողջ մատղաշ ծառերն ապահովում են անտառի կյանքը, ապա հետաքրքիր ե պարզել, թե այդ մատղաշն ի՞նչ ծագում ունի՝ կտրած ծառերի տեղն ե բուսել, թե բնական պայմանների հետեանքով ե աճել, սերմից ե առաջ յեկել, թե շիվերից և ալին։ Յեթե մատղաշը չկա, հետաքրքիր կլինի պարզել, թե ի՞նչպիսի ձեռվ են կտրում այստեղ ծառերը, ի՞նչպիսի հատման շրջանառություն ե իրագործվում և այլն։ Ապա շատ կարեոր ե ծանոթանալ ձեռք առնված ինսամքի սիջոցներին, յեթե այդ միջոցները կան, իսկ յեթե չկան, ապա հետաքրքիր ե պարզել թե ի՞նչմւ։ Հետաքրքիր ե նաև հետախուզել անտառային հրդեհների, ինքնակամ

հատված ծառերի և արածած անսառունների հետքերը։

Եքսկուրսիաներ կտարեելիս, անպայման պիտի հրավիրել տեղի անտառապետին կամ անտառապետի սգնականին, վորոնք պահանջված բոլոր հարցերին բացատրություն և պարզաբանում կարող են տալ։

Ինչ վերսբերում ե շրջանի անտառների վիճակագրական, տնտեսական և տնտեսվարական տեղեկություններին, ապա բոլոր տվյալները լիովին կարելի յե ստունալ անտառապետության գրասենյակից։

Մնաւառագուրկ շրջաններում եքսկուրսիոն աշխատանքներն, ի հարկե, սահմանափակվում են, և այդպիսի պարմաններում այդ աշխատանքներն ընթանալու լին շրջապատի կանաչ տարածություններն ուսումնասիրելու գծով։ Այդ գեզքում ուսումնասիրության հարցերի հետ ծագելու լին կանաչ տարածությունների ընդլայնման խնդիրներ։

**Գ. „ԱՆՏԱՌԻ ՈՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ”**

Ինչպես վերհում ասացինք, «Անտառի որին» մասնակցողները պիտի պարզ և վորոշ գաղափար ունենան տոնի նշանակության, ինդիքների և

նպատակների մասին։ Այդ դրությանը համելու հոմար, համառոտ նկարագրենք ազիտացիոն և պրոպագանդային աշխատանքների ասպարիզում անելիքների ընդհանուր պատկերը։ Համենայն դեպս, պիտի նորից հիշատակենք, վոր յեթե յերկարատե պրոպագանդա և ազիտացիոն աշխատանքներ չեն կատարվել, ապա «Անտառի որից» 2-4 շաբաթ առաջ անհրաժեշտ ե ազդպիսի աշխատանքներ կազմակերպել, հակառակ դեպքում «Անտառի որվա» տոնի կազմակերպությունը վոչ մի միտք չունի։ Մասնակորապես, զպրոցներում այդ գեպքում կարելի յէ մշակել հետեւյալ թեմաները։

1. Խորհրդային Միության անտառային հարսաությունները (Միությանը պատկանում ե յերկարագնդի անտառների մեկ յերրորդ մասը)։

2. Հայաստանի փոքրաթիվ անտառային տարածության անտեսական նշանակությունը։

3. Անտառի ղերը յերաշտի հանդեպ։

4. Անտառի ջրապահ նշանակությունը։

5. Անտառի հողապաշտպանողական նշանակությունը։

6. Անտառի առողջապահական նշանակությունը։

7. Ուժ ելին պատկանում անտառներն առաջ և ուժ են պատկանում հիմա

8. Անտառային տնտեսության ներկա դրությունը, ինքնակամ հատութիւնը, անասումների տմենութեք արածացում, ձմեռանոցների գոյությունը։

9. «Անտառի որվա» նշանակությունը։ Ինչպես պիտի անց կացնենք տոնն այս տարի։

Վերոհիշյալ նյութերն աշակերտները մշակելու յեն, ըստ հնարավորության, կոնկրետ տվյալների հիման վրա, վոր պիտի քաղել ինչպես գրականական, այնպես և եքսկուրսիոն ու հետազնական աղբյուրներից։ Մակայն անհրաժեշտ ե մի քանի խոռոք ավելացնել նաև արտադրական աշխատանքների մասին։ Այդ տիպի աշխատանքները պահանջում են հատուկ նախապատրաստում, վորովհետեւ գործին անծանոթ դեկավարներն ու մասնակցողները կարող են տոնի անհաջողության պատճառը դառնալ։ Միանդամայն սխալ ե այն համոզմունքը, թե տոնի հենց աշխատանքներից առաջ պիտի բացատրել մասնակցողներին իրենց աշխատանքների բլոնությունը ու ձեր։ Ազգպիսի բացատրությունները նախորոք կատարված աշխատանքների կրկնությունը պիտի լինեն։ Պիտի ասել, վոր, յեթե յենթաղրգում ե մասնակցողների մեծ բազմություն, ապա արտադրական աշխատանքների նախալարաստումը համապատասխան կազմականացնելու աշխատանքները։

կերպչական ձև ե պահանջում: Նախապատրաստումը յերկու մասի յե բաժանվելու. 1. անմիջապես «Անտառի որվա» աշխատանքները զեկավարող հրահանգիչների նախապատրաստում և 2. շարքային մասնակցողների նախապատրաստում, վոր կատարվում ե նախորոք պատրաստված հրահանգիչների միջոցով: Այդ հրահանգիչների խումբը կազմվում է ուսուցիչներից, պիոներ-դեկավարներից, կոմսոմոլի բջիջների ներկայացուցիչներից, նաևուշալիստների խմբակների ավագ անդամներից և այլն: Ապագա հրահանգիչներին նախորոք ծանոթացնում են «Անտառի որը» կայանալիք աշխատանքների հետ: Այդ ծանոթությունը լինելու յե վոչ թե բերանացի կամ նկարներով, այլ գործնական աշխատանքների միջոցով: Որինակ՝ յեթե ծրագրվում ե ծառատունկի կամ սերմեր ցանելու աշխատանք, ապա հրահանգիչներն անտառապետի, նրա ոգնականի կամ գլուղանտեսի դեկավարությամբ պիտի անկարանում կատարեն այդ աշխատանքները և վորոշ նմտություն ու վորձ ճեռեն:

Տոնին մասնակցողների նախապատրաստումը պիտի կազմակերպվի նույնպես գործնական աշխատանքների միջոցով: Այս դեպքում ձգտում են աշխատանքներն այնպես կազմակերպել, վոր

կատված են աշխատանքի բնույթի հետ: Արինակ, յեթե ծառեր անկելու աշխատանքներ են ձեռնարկելու, ապա գործնական պարագմունքները հետեւալ մոմենտների յեն բաժանվելու: Առաջին մոմենտ, պարագողները մանրակրկիտ կերպով ծանոթանում են տունկերին: Կարեոր և վորոշել ծառի արմատի վզիկը, ալսինքն, արմատի և բնի սահմանը: Յերկրորդ մոմենտ, զեկավարն առաջարկում է պարագողներից յերեքին ինքնուրույն կերպով ծառ անկել: Մյուսները հետեւում են անկելուն և անում են իրենց գիտողությունները: Յերրորդ մոմենտ, զեկավարը յերկու պարագողների ոգնությամբ դանդաղ և հանդարտ, անկում ե ծառը: Մյուս պարագողները հետեւում են և բերանացի ձեռակերպում կատարվող գործողությունները. « հողի վերին շերտը հանեցին մի կողմ, ցածի շերտը՝ մյուս կողմ», «հողը փշրեցին, մաքրեցին քարերից, մանրացրին և փափկացրին ձեռքերով», «ծառը դրին փոսի մեջ, արմատներն ուղղում են, վորպեսզի նրանք փոսում ազատ տեղափորվին» և այլն: Զուգընթացաբար բացարձում են բոլոր գործողությունների իմաստը: Զորբորդ մոմենտ, պարագողներն ինքնուրույն կերպով, խումբ-խումբ փորձում են ծառեր անկել: Միանց ուղղում և ոգնում են: Դեկավարն ոգնում և նրանց դժվարին դեպքերում:

Ներկա որինակը վերցրած և իրը մի գեպք՝  
աշխատանքների ընթացքում բոլոր զործողու-  
թյունները պիտի կատարել մանրամասն և ու-  
շագրությամբ, փորովհետեւ լինում են գեպքեր,  
իերք փոքրիկ բուսակները տնկում են արմատ-  
ները դուրս՝ գագաթը հողի մեջ, կամ տնկում  
են բոլորովին գործին չփերաբերող կողմնակի  
առարկաներ, որինակը սոճու փոխարեն՝ մասնաւ։  
Դ. ՀՈՂԱՄՍՍԻ, ՆՅՈՒԹԵՐԻ ՅԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Յենթագրվող աշխատանքների ծավալի ու չափի  
համեմատ նախորոք ընտրում ու հատկացնում  
են վորոշ հողամաս։ Հողամասը չափում և բա-  
ժանում են հարկ լեզած մասերի, իսկ լեթեցա-  
նելու մասղրություն կա, բաժանում են նաև  
մարգերի։ Մարգերը մշակում, մաքրում ու փոց-  
խում են, հետո նրանց վրա ականներ են փո-  
րում։ Տնկելիս հողամասում նախորոք գծում են  
տնկվելիք ծառերի ուղղությունը և նշում են  
փորվելիք ծառերի տեղերը։ Իբրև ընդհանուր  
տեխնիքական որենք, անհրաժեշտ է հիշել, փոր  
փոսերը պիտի փորել անմիջապես տնկելիս։

Տնկվելիք ծառերի տունկերը նույնպես ան-  
հրաժեշտ են նախորոք պատրաստել։ Յերբ շրջա-  
կալքում տնկարաններ չկան և տունկեր ստանա-

լու վոչ մի հնարավորություն չկա, տպա պիտի  
գիմել տեղական անտառապետին կամ գյուղա-  
տնտեսին, վորոնք ցուց կտան հարկ լեզած ա-  
ջակցությունը։ Տունկերը տեղափոխելիս, կարե-  
գոր ե պաշտպանել նրանց արմատները չորա-  
նալուց։ Այդ վտանգից տունկերն ապահովելու  
ինչպես և տնկելու և ցանելու ամբողջ տեխնի-  
կալի մասին ասված ե գորքի հավելվածում։

Յեթե յենթագրվում ե սերմեր ցանել ապա  
նախորոք պիտի կշռել սերմերը յուրաքանչյուր  
ակսի համար, լցնել առանձին ծրարի մեջ և  
վրան համապատասխան մակագրություն անել։  
Այս շատ կարևոր է և հեշտացնում ե ցանելու  
գործողությունը։ Նախորոք անհրաժեշտ և նաև  
գործիքների մասին հոգ տանել նկատի առնե-  
լով լենթագրվող աշխատանքները, հաշվում են,  
թե վարքան և ինչպիսի գործիքներ են անհրա-  
ժեշտ։ Նախորոք այդ գործիքները վերանայում  
ե կարդի յեն բերում։ Առհասարակ, կամպանիա-  
ցի կազմակերպումն անպես են գասավորում,  
վոր բուն «Անտառի որվա» համար մեան միան  
հետաքրքրություն զարթեցնող, աշխատյժ և ու-  
նետաքրքրություն զարթեցնող, աշխատյժ և ու-  
նետաքրքրություն զարթեցնող, աշխատյժ և ու-

կամ նրա ոգնականը կամ գյուղատնտեսը: Այդ  
արտադրական նախապատրաստական աշխա-  
տանքներին ցանկալի յէ գրավել դպրոցի աշա-  
կերաներին, բաժանելով աշխատանքը նրանց  
մեջ ըստ հասակի և ույժերի:

### Ե. «ԱՆՏԱՌԻ ՈՐՎԱ» ԺԱՄԱՆԱԿԻ

«Անտառի որվա» ժամանակը, բուն որը  
վորոշելու հարցը շատ կարևոր ու լուրջ խնդիր  
է: Վորովհետեւ «Անտառի որվա» արտադրական  
աշխատանքները, գիտափորապես, սերմեր ցանել  
և ծառեր անկեն եւ, ուստի այդ տոնն, ըստ ե-  
լության, կարելի յէ կազմակերպել և աշնանը,  
և դուրսանը: Սակայն աշունը «Անտառի որվա»  
համար հարմար ժամանակ չի կարող լինել, վո-  
րովհետեւ, մի կողմից՝ աշնանը բնության պայ-  
մանները տոնական հատուկ պայմաններ չեն,  
մյուս կողմից՝ աշնանն արդեն ընդունված է  
«Բերքի տոնը»: Ուրեմն, մնում եւ գարունը:  
Բայց յերբ, ի՞նչ որ: Գարնանը ծառերը տնկում  
են ծառի բողբոջները բացվելուց անմիջապես  
առաջ: Մյուս գեպքերում անկած ծառերը կա-  
րող են չկանաչել, վորովհետեւ մատղաշ տերե-  
ների միջոցով գոլորշիցած ջուրը վնասված  
արժատաներից չի ծծվելու ծառի մեջ. ջրի յել ու  
մուտի հավասարակշռությունը խախտվելու յի,

և անկած մատղաշ ծառերը կարող են չորանալ:  
Ուրեմն, յեմեն ընդունենք, վոր «Անտառի որվա»  
ժամկետը պիտի համաձայնեցնել ծառերը տըն-  
կելու աշխատանքներին, ապա «Անտառի որը»  
կարելի յէ նշանակել տեղական կիմայական  
պայմանների համեմատ՝ զարնանը, յերբ ծառե-  
րի բողբոջներն սկսում են գարթնել բայց գեռ  
չեն բացվել: Հայաստանի կիմայական գոտիներն  
ու պայմաններն այնքան բազմազան են, վոր  
վորոշակի ասել, թե այդ յերեսույթը վորտեղ և  
յերբ և լինելու, դժվար է: Բացի զրանից, պի-  
տի նկատի առնել, վոր գարունը զանազան տա-  
րիներում տարբեր ժամանակ ե գալիս: Ընդհան-  
րապես, միջին հաշվով, կարելի յէ ասել. վոր  
այդ շրջանի հայաստանի բազմատեսակ պայման-  
ներում տարածվում է մարտի 15-ից մինչև ապ-  
րիլի 15-ը:

Ավելի լավ եւ «Անտառի որվա» ժամանակը,  
բուն որը յուրաքանչյուր տարի առանձին նշա-  
նակել, զեկավարվելով տվյալ վայրի տարու կի-  
մայական առանձնահատկություններով, բոլորո-  
վին հաշվի չառնելով որացուցային ժամկետները,  
հիմք ընդունելով միայն ֆեն լոգիական դիտո-  
ղությունները:

## V. «ԱՆՏԱՌԻ ՈՐՎԱ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նուի քան բուն կազմակերպչական ձևերի մասին խոսելը, անհրաժեշտ է մի քանի դիտողություններ անել այն թերությունների մասին, վոր սովորապես կրկնվում են տարեց-տարի, «Անտառի որվա» կամպանիայի ժամանուկ: Այդպիսի թերություններից աչի յե ընկում ամենից առաջ հետեւյալ յերեսությը. սովորաբար, «Անտառի որ» կազմակերպելու ցանկությունը, կարծես թե, առաջ ե գալիս անոպասելի և ուշ: Ակսում են բանակցություններ կազմակերպությունների և հիմնարկների միջն և, լավագույն դեպքում, առնը չի կազմակերպվում, իսկ սովորաբար, չծրագրված, անգույն և անհետաքրքիր փորեե պատճական աշխատանք և կազմակերպվում: Անհրաժեշտ է շեշտել, վոր, յեթե «Անտառի որվա» ժամկետն անցել ե, ապա ավելի նպատականարմար և բոլորովին չկազմակերպել քան թե ձևականորեն կազմակերպել:

Յերկրորդ հանգամանքը՝ մեծ առաջադրությունների ու ծրագրերի վասնվն ե: Յեթե որքեկտիվ պարմաններն այնպես են, վոր շատ աշխատանքներ կատարելու նյութեր, գործիքներ կամ զեկավարներ չկան, լավ ե բարձականական քչով: Միշտ պետք է աչի առաջ ունեալ «քիչ լինի, լավը լինի» սկզբունքը:

Հաճախ արամադրություն ե լինում հանկանալ «Անտառի որն» իրեհ ծառատունկի որ: Եսիս, ինչպես տեսանը, այդ համեմատությունը սխալ և հիմնովին և յերկրորդ՝ բացի ծառատունկից, կարեոր են նաև այլ տեսակի արամադրական և ազիտացիոն աշխատանքներ, վորոնց մասին ասացինք վերեւում:

Յերբեմն արամադրություն և սահմանագործություն կամաց ականակցողներին զնահատել ձրի բանվորական ուժի տեսակետից: Անկառակած, այդ արամադրությունը վտանգավոր և հիմնովին սխալ ե: Այդպիսի արամադրությունների առաջն անհրաժեշտ է առնել հենց ծագելու վայրկանից:

Կարեոր ե նույնպես մասնակցողների արտադրական նախուալ որաստումը: Սովորաբար, աշխատանքների մասին տալիս են տեխնիքական ցուցմունքներ անմիջապես աշխատանքներն ըսկելուց առաջ և այն ել մի կերպ: Բայց այդ ձեւն արժեքավոր չե և ցանկալի արդյունքներ տալ չի կարող: Տոնի բոլոր մասնակցողներն անպայման գործնականորեն նախորոք պիտի ծանոթ լինեն կատարվելիք տեխնիկայն, ինչպես ասացինք վերեւում:

Պիտի խուսափել նաև այնպիսի աշխատանքներ կատարելուց, վոր հետագայում աչքաթող

են արգելու։ Յեթե, որինակ, հնարավոր չետնկվելիք ծառերը հետազայում պաշտպանել անասուններից, կամ տնկվելիք ծառերի բախտը կախված է լինելու պատահականություններից, նրանց վոչ վոր ինամելու չե, ապա, լավ է այդ պայմաններում ծառեր բողոքովին չտնկել։

Արտադրական աշխատանքներ ծրագրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել կոմունալ տնտեսության բաժնի ծրագիրն ու հեռանկարներն, ինչպես կանաչ տարածությունների, այնպես և շինարարական աշխատանքների ասպարիգում։ Յեթե այս տարվա տնկած ծառերը մի քանի տարուց հետո նոր հատակագծի համաձայն կտրվելու յեն և սրանց տեղը շինություն կամ փողոց է լինելու, ապա կատարված աշխատանքը իսպառ կորցնում յե յուր իմաստը։

Մի խոսքով, «Անտառի որվա» մանրամասն ծրագիր մշակելն ու նախորոք բոլոր տեղական որյեկտիվ ու կիմայական պայմանները հաշվի առնելը պարտադիր պիտի լինի առեն անգամ տոնը կատարելիս։

Անցնելով «Անտառի որ» կազմակերպելու բուն խնդրին, կարելի յե պարզապես պնդել, վոր կազմակերպչական մասիցն ե միանգամայն կախված կամպանիայի հաջողությունը։ Յեթե այդ կողմը թույլ է մշակված, կարելի յե հաս-

տառապես առել, վոր տոնը դատապարտված է անհաջողության։

Կազմակերպչական մասը ճիշտ և կանոնավոր հիմքերի վրա գնելու համար անհամար դաժեռ կենտրոնացած լինի մի ուժեղ զեկավար խմբի ձեռքում։ Սովորաբար, կամպանիայի ղեկավարությունը տեղերում ընկնում է «Անտառի որվա» հանձնաժողովների վրա։ Այդ հանձնաժողովների մեջ մտնում են անտառաշխատակիցների, կոմունալ տնտեսության, պիոներ, կազմակերպության, գլոբոցների, «անտառի բարեկամների» (յեթե այդպիսի ընկերությունն զոյություն ունի ավյալ շրջանում) և բնասերների խմբակների ներկայացուցիչները։ Հանձնաժողովի այս կազմն, ինարկե, կարող ե զանազան պայմաններում փոփոխվել թե այս կազմակերպություններից գորին է պատկանելու նախաձեռնությունը՝ դժվար ե ասել, յերեկ նրան, ով ավելի հետաքրքրություն ու յեռանդ կմտցնի կազմակերպչական աշխատանքի մեջ։ Պաշտոնական ու ձևական վերաբերմունքն, ինարկե, գործի հաջողությանը չի նպաստելու։

Ի նկատի առնելով աշխատանքների դժվարությունը, կարելի յե ասել, վոր հանձնաժողովը կազմվելու յե «Անտառի որից» 2-3 ամիս առաջ։ Միայն այդ դեպքում կարելի յե նախու-

րոք ծրագրել, կազմակերպել, նախառադատությունը և հաջող ավարտել «Անտառի որբ»:

Հանձնաժողովի առաջին գործն արտադրական և ընդհանուր ազիտացիալի նախապատրաստման հնարավորությունների հաշվառումն ե լինելու:

Որինակ՝ հաշվի յե առնելու, թե յէլք, վնրադեղ, ինչպէսի և վնրքան ծառեր կարելի յե անկել կամ սերմեր ցանել, կամ ցանկապատ կանգնեցնել և այլն: Կամ որինակ՝ պարզուծ են համապատասխան դպրոցների, պիտներ-խմբակների, ակումբների, պրոֆմիության տեղկուների միջոցով, թե «Անտառի որբն» վնրքան մասնակցողներ են լինելու:

Կամպանիաին մասնակցող յուրաքանչյուր կազմակերպության հետ հանձնաժողովը կապվում ե կազմակերպության ներկայացուցչի միջոցով, վորի պարագանությունը՝ մշտական կենդանի կապ և աեղում հրահանգչական աշխատանքն ե լինելու:

Դպրոցներն ուղարկում են ներկայացուցիչներ մանկավարժների և սովորողների կողմից:

Մասնակցողների հաշվառումը կարելի յե կատարել հետեւյալ բովանդակություն ունեցող հարցաթերթերով:

1. Կազմակերպության անունը, հասցեն, հեռախոսը.

2. Կազմակերպության անդամների լնդհանուր բանակը.

3. Քանի մարդ և մասնակցելու «Անտառի որբին».

4. Կարող ե կազմակերպությունը մամնակցել նախապատրաստական՝ աշխատանքներին, ինչպիսի, քանի որվա ընթացքում, քանի մասնակցող ե լինելու:

5. Քանի բահ (այլ գործիք) կարող ե բերել իրեն հետ կազմակերպությունը:

6. Ընտրված հրահանգիչների անուն-ազգանունը և հասցեները:

Ծանոթություն. — Հարցաթերթը վերադարձնել . . . . ամսի 192.թ.

Կազմակերպության պատասխանատու աշխատակցի ստորագրությունը.

Հարցաթերթի հետ միաժամանակ ուղարկում են փոքրիկ կոչ՝ կազմակերպվելիք կամ պանիալի նշանակության մասին, հրավիրելով մասնակցել «Անտառի որբին» և նշանակում են ներկայացուցիչների առաջին ժողովի որը: Այդ ժողովում վերջնականապես վորոշվում ե մասնակցողների թիվը, կազմակերպվելիք աշխատանքների ընուլթը, կազմվում ե աշխատանքների որացուցային ծրագիր և աշխատանքը բաժանվում ե հանձնաժողովի անդամների մեջ: Ժողովից հետո կազմակերպչական աշխատանք-

ներն ընթանում են մի քանի ուղղություններով,  
կատարվում ե ընտրված ակտիվի նախապատ-  
րաստումն, կազմակերպվում ե ազիսացիւն աշ-  
խատանք տեղերում, նախապատրաստվում են  
կամպանիալի համար պահանջվելիք նյութերը՝  
նողամասը, գործիքները, սերմերը, առնկերը և  
այն, և, վերջապես, ժամկում ե տոնի գեղար-  
վեստական մասը:

Ընտրված ակտիվի նախապատրաստման վրա  
անհրաժեշտ ե առանձնապես ուշադրություն  
դարձնել: Հանձնաժողովի բոլոր ուժերը պիտի  
կհնարոնանան այդ աշխատանքների վրա: Հարցա-  
թերթերին կցած կոչի մեջ ցույց ե տրվում, վոր  
կազմակերպությունը պիտի ընտրի իսկապես  
ակտիվ, և վոչ թե պատահական անձանց, վո-  
րովինետև նրանց հետագայում լուրջ և մեծ աշ-  
խատանք ե հանձնարարվելու:

Ընտրվածների նախապատրաստումը խոր-  
նալու յե անշափի, վոր նրանք հետագայում ինք-  
նուրույն կերպով իրենց կազմակերպություն-  
ներում հարկ յեղած աշխատանքները կարողա-  
նան բավարար չափով կատարել:

Կենտրոնական զեկավար խմբի մասնակցու-  
թյունը տեղերում գեկուցներ կազմակերպելու  
համար անհրաժեշտ չե, ծայրահեղ գեպերում  
միայն, յերբ ընտրված ակտիվը թույլ և անկա-

րոդ ե այդ աշխատանքը կատարել, կարելի յե  
դիկավար խմբի ողնությանը դիմել:

Աշխատանքի ընթացքը հաշվառման յենթար-  
կելու համար մերթ ընդ մերթ գումարվում են  
ընտրվածների ժողովները: Այդ ժողովներում  
պարզում են հրահանգչական նախապատրաս-  
տումների հետեանթերը:

«Անտառի որվա» նախորդակին գումարվում  
է վերջին ժողովը և բոլոր մասնակցող կազմա-  
կերպությունների ներկայացուցիչներին հայտ-  
նում են որվա մասնաժաման ծրագիրը, հավաք-  
վելու տևզը, ժամանակը, կարգը և այլն: Դրա-  
նից հետո այս անթույլատրելի յե վորև ե փո-  
փոխությունն մտցնել ծրագրի մեջ:

Դեկավար խմբի ժողովների համար հարմար  
ե նշանակել վորոշ կայուն որեր ու ժամեր և  
վոչ մի գեպքում չխախտել այդ որերն ու ժա-  
մերը:

Մնադի և խմելու ջրի հարցերը նույնպես  
նախորոք պիտի կանոնավորած լինեն, հակա-  
ռակ դեպքում աշխատանքներին մասնակցողները,  
մասնավանդ դպրոցականները հոգնելով աշխա-  
տանքներից ու ճանապարհորդություններից, կը-  
կորցնեն վորեն հետաքրքրություն և տոնի տը-  
պավորությունը կփշանա:

Յեթե հստագորություն չինի մնադի հարցը

բավարար չտիով լուծելու, պիտի զգուշացնել յերեխաներին, վոր իրենց հետ նախաճաշ վերցնեն, իսկ ջրի համար պիտի նախորոք հոգ տանել, յեթե տեղում մաքուր խմելու ջուր չկա, ապա ախտեղ նախորոք ջուր ե ուղարկվելու:

Ըստհանը բավես, պիտի տաել, վոր տոնի ամբողջ ծըսպիրը պիտի մշակված լինի ամենաճիշտ կերպով և շատ մանրաժամանորեն: Զնախատեսված վորեւե փոքրիկ դեպք կամ հանգաժանք կը փշացնի տոնի ամբ ողջ տպավորությունը:

Աշխատանքների մասսայական ընույթը պահանջում ե գործը զինվորական կարգապահությամբ գասավորել:

«Ծնտառի որպա» նախորյակին ղեկավար խերի սիջից ընարվում ե լիազոր յեռյակ: Այդ յեռյակին հանձնարարվում ե տոնն անցկացնելու ամբողջ լիազորությունը, և բոլոր ընտրված հրահանգիչները մանում են նրա տրամադրության տակ: Վորեւե կազմակերպությունից (գերապատվությունը տրվում ե պիտներներին) կամ գըպոցից կազմվում ե կապի խումբ: Այդ խմբի քանակը մասնակցող կազմակերպությունների թը վից շատ պիտի լինի: Կապի խումբը գտնվում է յեռյակի տրամադրության տակ, և նրա առանձին անդամները կենդանի կապ են պահպանում յեռյակի և մասնակցող կազմակերպությունների մեջ:

Տոնի որը, բացի յեռյակից, վոչ վա՞ր կարգադրելու իրավունք չունի: Յեթե մասնակցող հիմնարկների ու կազմակերպությունների թիվը հաշատ է, կարելի յե նրանց նախորոք վորոշ համարներ հատկացնել:

Ըստրված հրահանգիչները մնում են իրենց կազմակերպությունների մոտ և ղեկավարում աշխատանքները: Բացի այդ ղեկավարներից, կարելի յե նախապատրաստել նաև հրահանգիչների ազատ կազմ: Այդ գերպը ունի ազատ հրահանգիչները բաժանվում են ըստ կազմակերպությունների կամ ուղղվում են հրահանգչական աշխատանք պահանջող թույլ տեղեր:

Ղեկավարող խմբի անդամներն ունեն հատուկ նշաններ:

Մասնակցողների բազմությունը նույնպես պիտի կազմակերպված լինի: Դեռ նշանակված տեղը համարվելուց առաջ, լուրաքանչյուր կազմակերպության պատասխանատու ղեկավար մասնակցողներին բաժանում ե քառյակների և նըշանակում է քառյակների ղեկավարներ: Այդ ղեկավարների ցուցակը նա աշխատանքի ընթացքում պահում է իր մոտ: Այդ ձեր ստորաբաժանումը հեշտացնում է մասնակցողներին աշխատանքի բաժանելն ու արագացնում է շարժուն ե գարձնում կազմակերպության ամբողջ գործունեյությունը:

Կազմակերպչական այս ձեն, իհարկե, վերջնական ու անփոփոխ չպիտի համարվի: Ալստեղ ցուց են տըված միայն լնդհանուր զծերը վորոնք կարող են փոխվել և լրացվել: Կարեռն այն ե, վոր աշխատանքների նախորոք կազմած ծրագիրն իրագործվի ամենայն ճշտապահությամբ և հետևողականությամբ:

«Անտառի որը» յեղանակի մանը փոփոխություններից չպիտի հետաձգվի, վորովհետև յեղանակի փոփոխություններից առաջ յեղած տառանութերը կարող են տոնի անհաջողության պատճառը դառնալ:

Միայն յեղ անակը հիմնովին փոխվելու դեպքում տոնը կարելի յէ հետաձգել 1—2 որով: Համենայն դեպս, պիտի հիշատակենք, վոր հետաձգման մասին կարգադրություն կարող ե անել միայն լիազոր յեռյակը:

Գեղարվեստական, մասս անհրաժեշտ ե զնել վերջում:

Ինչպես արտադրական աշխատանքներն, այնպես և գեղարվեստական մասը պիտի մասնակցողների մեջ տոնական արամագրություն ստեղծեն: Մյուս կողմից անհրաժեշտ ե հիշել, վոր գեղարվեստական մասը նույնպես կատարվելու յերացողթյա, ուստի և ծրագիրը կազմած ե լինելու գեղեցիկ և կենդանի նկարներից:

(Կենդանի նկարներ, մարմնաժարպություն, սպորտիվ և մասսայական խաղեր և այլն):

Արտաքուստ «Անտառի որվա» տոնը բաղկացած ե հետեւյալ մոմենտներից:

1. «Անտառի որին» մասնանցողները դրոշակնե-



Նկար 2 «Անտառի որը» Դարտարիլիսայում  
1927 թ. գարնանը:

ըով ժամանում են նշանակված տեղը (Նկար 2):  
Յեկողներին ցուցակագրում են, հայտնում են

յեթե հարկավոր է, նրանց համարը, տալիս են  
դեկավարներ և գործիքներ:

2. Ժողով կամ միտինգ: Կարճառութ բացա-  
տրություն աշխատանքների մասին: Ամբողջ ժո-  
ղովը 30-40 րոպեից շատ չպիտի տել



Նկար № 3 «Անտառի որլ» Դարձարիլիստ-  
րում 1927 թ. գարնանը: Աշխատանքների վայրում:

3. Անտառիցողները նվազածությամբ ու-  
ղարվում են աշխատանքների վայրում:

4. Տնիկն մասնակցողները բաժանվում են  
խմբակների: Խմբակները զնում են յուրա-  
քանչյուրը նախորոք իրեն հատկացրած հողա-  
մասը:

5. Հողամասի մոտ խմբակը նորից ծանոթա-  
նում է կատարվելիք աշխատանքի բնույթին:  
Դեկավարը հարկավոր բացատրություններ և  
ցուցմունքներ են տալիս:

6. Արտադրական աշխատանքների կատա-  
րում:

7. Աշխատանքների ավարտում, կատարածի  
հաշվառում ու ցուցակագրում, գործիքների հանձ-  
նում, յեթե արդիսիք մնալու յեն այդտեղ:

8. Ընդմիջում: Նախաճաշ:

9. Գեղարվեստական մաս:

10. Թռուցիկ միտինգ: Կատարված աշխա-  
տանքների հայտարարում: Լոգունգներ: Նվազա-  
ծություն:

11. Վերադարձ: Յեթե գործիքները յետ են  
բերված՝ նրանց հանձնումը:

## VI. ԱՆՏԱՐԻ ՈՐԼԱ» ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱ- ՌՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՅՈՒՄԸ

«Անտառի որլ», ըստ ելության, տեսզական  
տօն է, վոր ավելի պայծառ արտահայտվում ե  
գաւանանը մեկ կամ յերկու որվա ընթացքում:  
գաւանանը

Ասկալն մինչեւ այդ մոմենտը «Անտառի որվո» կամպանիան ընթանում է նախազարաստական և աղիտացիոն աշխատանքների ձեռվ։ Տոնից անմիջապես հետո յիշ աշխատանքները չեն գաղարելու։ Այդ դեպքում նախ հետաքրքիր և ուսումնասիրել են փորոշել տօնի բացասական կողմերը՝ հետազայտում նբանցից խուսափելու համար։ Հետո կարենոր են կատարված նվաճումները խորացնել և շարունակել։

Վերջապես, արտադրական աշխատանքների ասպարիզում կատարելու դեռ բավական աշխատանք են մնում։ Տնկած ծառերն ու ցանած սերմերը խնամելու համար յերբեմն լավ կլինի շեֆություն հաստատել։ Այս դեպքում դպրոցներին հնարավորություն են վերապահվում տեսողական դիտողություններ կազմակերպել, միացնելով նրանց բուսակների և տունկերի խնամքը (հողի փափկացումը, քաղճան, յեթե կարիք կա ջրելք և աղն)։

Աշակերտները նկարում ու համարում են աճող ծիլերը, համարում են, թե յերբ, վորքան և բուսնում, բուսածներից վնասը և փշանում, յերբ են փշանում և այլն։

Շատ հետաքրքրական են սերմերը ցանելուց առաջ կշռել, համարել՝ թե վո՞ր ակոսում ինչքան սերմ են ցանփում և հետագայում փորոշել։

Թե վո՞ր առկոսն են բուսներ, վո՞ր առկոսը յերբ (քանի որում) են բուսներ և աղն։ Այդպիսով կարելի յետշակերտներին ծանոթացնել սերմերի աճեցողության գաղափարին ու ատրամական սկզբունքներին։

Յեթե ցանկապատված են անտառում վորոշ տարածություն՝ անտառուներից պաշտպանելու համար, հետաքրքիր կլիներ նկարել այդ տարածությունը ցանկապատելուց առաջ և հետո ըստ տարիների։ Այդ տարածության ուսումնասիրությունը հարուստ նյութ կարող են տալ աշակերտներին «Անտառի որվա» հետազա աշխատանքների ժամանակ։

Առաստարակ, բոլոր կատարած աշխատանքներն անհրաժեշտ են թվական տվյալների վեր ածել և հետևել թե ժամանակի ընթացքում այդ թվերն ինչպես են փոփոխվում և ինչպես ու ինչու յե փոխվում տվյալ անտառամասի պատկերը կատարած աշխատանքների շրջանում։

Այդ դիտողություններից ինքնաբերաբար յեզրակացություններ են առաջ գալիս։ Յեվ այդ յեզրակացությունները կոզնեն իմաստ դանել անտառալին տնտեսության այն պահանջների մեջ, վորոնք շատ դեպքերում թվում են անհասկանալի ու անտեղի։

Այդպիսով, «Անտառի որվա» հետևանքների ամրացումն ու հաշվառումը յերաշխավորում են աղագա տօնի նորանոր նվաճումներ։

## ՀԱՎԵԼՎԱԾ

### I. ԹԵԶԻՄՆԵՐ «ԱՆՏԱՌԻ ՈՐ» ՆՅՈՒԹԻ ՄԱՍԻՆ

ա. Թառի նշանակությունը մարդու համար.

1. Ծառը մարդուն կլանք է տալիս, վորովհետի այն թթվածինը, վոր մարդիկ և կենդանիները շնչում են ողից, ծառը վերադարձնում է ողին, պահելով իր մեջ ողի ածխածինը:

2. Ծառը մարդուն տաքություն է տալիս և մեքենաներ է շարժում, վորովհետեւնա հավաքում և պահում է իր մեջ արեգակի ճառագայթների եներգիան:

3. Ծառը մարդուն շինության և բնակարանի կահկարասիների նյութեր է տալիս:

4. Ծառի փայտեղենից շատ ոգտակար նյութեր կարելի յեւ ստանալ, որինակ՝ թուղթ, արհեստական մետաքս, մազութ, սկիպիդար, սպիրտ և այլն:

5. Ծառը մարդուն առողջություն է տալիս, վորովհետեւնա ողից ծծում է իր մեջ ածխածին և կանգնեցնում է փոշին:

բ. Խորհրդային Հայաստանի անտառներն ու նրանց նշանակությունը.

6. Խորհրդային Միությունն անտառներով յերկրագնդի ամենահարուստ յերկիրն ե. յերկրագնդի անտառների մեկ յերրորդ մասը նրան և պատկանում:

7. Խորհրդային Հայաստանն աղքատ ե անտառներով, նրա տարածության հազիվ  $8-9^0/_{\circ}$  ն ե միայն անտառներով պատաժ: Խորհրդային մուսաստանը փայտեղենն արտահանում է արտասահման, իսկ Խորհրդային Հայաստանը՝ ներմուծում է:

8. Հայաստանի փոքրաթիվ անտառներն ըստ գավառների տարածված են շատ անհավասարաշափ Դիլիջանի, Լոռի-Փամբակի, Զանգեզուրի և Մեղրու գավառներում անտառները կազմում են տարածության  $15\cdot$ ից մինչև  $30^0/_{\circ}$  ը, իսկ մնացած գավառներում անտառներ կամ չկան, կամ կան ցանցառուաներ և մացառուաներ:

9. Ալդ փոքրաթիվ անտառներն ել ճնաժամի մեջ են: Շնորհիվ ինքնակամ զիշատողական հատումների, անտառների արածացնելու և ձմեռանոցների քայլայիչ աղգեցության, մեր անտառները գտնվում են գոչնչանալու համարյակին, անտառների վերին սահմանը (յակաղներին մերձակալ) ցածրանում, իսկ ցածի սահ-

մանը (նակելներին մերձակա) բարձրանում է:

10. Դրա հետևանքն այն ելինելու, վոր ամափի, անպետք հողերը շատանալու յեն, հեղեղատները հաճախակի յեն ավերելու գյուղացու տնտեսությունը, վառելափայտի և շինափայտի ձգնաժամը որեցոր ավելի սուր կերպարանք ե ստանալու և յերկրի կլիման խստանալու յեն:

Գ. Ենչ պետք ե անել Խորհրդային Հայաստանի անտառապահին տնտեսությունը բարելավելու համար.

11. Խորհրդային Հայաստանի անտառապահին տնտեսությունը պահանջում է գործոն ողնություն և աշակցություն աշխատավորական լայն մասսաների կողմից:

12. Անհրաժեշտ ե վերջ առաջ անտառներին անուշագիր վերաբերվելու սովորությանը, աչքի առաջ ունենալովն բանակությունն ու ոգուաները:

13. Գյուղացիները պիտի վերջ տան չթուրատրված հատումներ կատարելուն, անտառում անտառներ արածացնելուն և այլ ապրինի արարքներին:

14. Տեղական նշանակություն ունեցող անտառներում գյուղացիները պիտի սովորեն կանոնավոր անտառալին տնտեսություն վարել:

15. Կրակի հետ պիտի զգուշ վարչել և թույլ չտալ, վոր անտառը հրդեհի:

16. Ամբողջ աշխատավորությունն, ըստ հնարավորության, պիտի մասնակցի և աշակցի մեր անտառային տնտեսության վերականգնմանը:

17. Դպրոցները, կոմյերիտմիությունը և պիոներներներն առաջին հերթին պիտի մասնակցեն Խորհրդային Հայաստանի անտառների վերականգնման աշխատանքներին:

Դ. Ենչու յե կազմակերպվում «Անտառի որը» յեվ ինչպես պետք ե կազմակերպել այն.

18. «Անտառի որը» կազմակերպվում ե՝ Խորհրդային բոլոր քաղաքացիների ու շաղրաթյունը Խորհրդային անտառների և կանաչ տարածությունների պահպանության և վերականգնման ինպիլների վրա՝ կենտրոնացնելու համար:

19. «Անտառի որքա» կամպանիայի ընթացքում պիտի լուսաբանվեն անտառների և կանաչ տարածությունների կյանքի ու նշանակության հետ կապված հարցերն ընդհանրապես, և Խորհրդային Հայաստանի անտառների ու կանաչ տարածությունների կյանքի և նշանակության հետ կապված հարցերն՝ մասնավորապես:

20. Վորպեսպի «Անտառի որը» հասնի իր նպատակին, դատարկ խոսքերը բավական չեն, անհրաժեշտ ե կոնկրետ, գործնական արտադրական աշխատանք՝ մեր անտառները և կանաչ

տարածությունների զբությունը բարելավելու և  
նրանց քանակը շատացնելու համար:

## II. ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ԶԵԿՈՒՑՈՂԻՆ

Վերոհիշյալ թեղիսներում տրված են ընդ-  
հանուր և եյալան նյութեր, վոր կարելի յե ոգ-  
տագործել «Անտառի որվա» կամպանիայի ժա-  
մանակ: Զեկուցողին հնարավորություն ե վե-  
րապահվում ընտրել թեղիսներէց այն, ինչ վոր  
ավելի հարմար ու անհրաժեշտ ե տեղի պայ-  
մաններում: Զեկույցը հարժար ե զրուցի ձևով  
անց կացնել: Այդ գեպքում ունկնդիրների ու-  
շագրությունն ու հետաքրքրությունն ավելի  
հեշտ ե գրավել:

Զեկույցը լուսաբանվելու յե շրջակայքի կոնկ-  
րետ նյութերով, տվյալներով, ոլլակատներով,  
դիագրամներով և տվյալն:

Նախորոք անհրաժեշտ ե տեղիս անտառա-  
պետության զրասենյակից վերցնել հարկավոր  
վիճակագրական, տեղեկական և այլ տվյալներ:

Զեկույցի նյութն, ի հարկե, պիտի հարմա-  
րեցնել ունկնդիրների հաստիքին, պատրաստա-  
կանությանը և շրջապատող որյեկտիվ պարման-  
ներին:

Պիտի խուսափել մասնագիտական տերմին-  
ներ զործ ածելուց և տհուտկան վերլուծությունն-  
եր կատարելուց:

Կարենը ե մանրամասն կանգնել «Անտառի  
որվա» արտադրական և հաստրակական ովտա-  
կար նշանակության վրա:

Ազգա անհրաժեշտ և նուև մանրամասն պար-  
զաբաննել աեղիս մոտակա սնառառների և կանաչ  
տարածությունների կարիքները վորոշելով, թե  
ինչպիսի օգնություն կարելի յե կազմակերպել  
նրանց համար «Անտառի որվա» կամպանիայի  
ժամանակ:

## III. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՍԵՐՄԵՐ ՑԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սերմեր հարմար ե ցանել հատուկ՝ այդ  
նորատակի համար նախորոք հատկացրած՝ տարա-  
ծության վրա, վոր մենք անկարան ենք անվանում:

2. Սերմերից հետագայում ծառեր ստանա-  
լու համար աշխատանքները բաժանվում են յե-  
րեք շրջանի. առաջին շրջան՝ սերմերը տնկա-  
րանում ցանելին ու աճեցնելը, յերկրորդ շրջան՝  
սերմերից բուսած 1-2 տարեկան բուսակները  
«գպրոց» տեղափոխել և «գպրոցում» նրանց  
1-2 տարի աճեցնելը, («գպրոց» այս գեպքում  
անվանվում ե անկարանի մի մասում հատկաց-  
րած տարածությունը, վորտեղ տեղափոխվում  
են բուսակները) և յերրորդ շրջան՝ գպրոցի մատ-  
ղաշ տունկերը մշտական տեղեր տեղափոխելու:

3. Տնկարանում սերմեր ցանելու և դրական արդյունքներ ստանալու համար նախորոք անհրաժեշտ է հողը մշակելու: Ցեղի ցնթաղրվում է ցանքը կատարել գարնանը, ապա հողը պիտի մշակել աշնանից: Տնկարանի հողը պիտի վարել աշնանը և գարնանը փորել մեկ բանի խորությամբ, (24-26 սանտիմետր): Տնկարանի տարածությունը պիտի բաժանել հավասար քառամասերի, քառամասերը՝ 1 մետր լայնության մարգերի, իսկ առանձին մարգերը միմյանցից բաժանվում են 1/2 մետր լայնության ձանապարհներով: Մարգերի հողը նորից պիտի փշել և մաքրել քարերից և զանազան բույսերի արմատներից և փոել ճիշտ հորիզոնական ուղղությամբ: Մարգերը կարող են լինել զանազան ուղղությունների, բացի այն դեպքից, յերբ նրանց վրա ցանված են այնպիսի սերմեր, վորոնք բուսներու առաջին շրջանում պահանջում են ստվեր. այդ դեպքում մարգերի ուղղությունը պիտի լինի արեւելքից արևմուտք: Մարգերի մակերեվութը կարող ե լինել կամ հողի հորիզոնին հահավասար, կամ նրանից բարձր, կամ ցած՝ տեղի կլիմայական պայմանների համամատ:


Անձրևալին շրջաններում, վորտեղ հողն ամբողջ ամառվաընթացքում խոնավ ե, մարգերը հողի հորիզոնից բարձր են անում, չորալին շըր-

ջաններում, ընդհակառակը, մարգերի մակերեվութը հողի ընդհանութը հորիզոնից ցած ելինելու: Բարեխառն շրջաններում մարգերի մակերեվութը հողի հորիզոնին հավասար պիտի անել:

Մարգերում սերմեր ցանելու համար ակուներ են փորում: Ակոսները տարածվում են մարգերի լայնությամբ, մեկը մյուսից 25 սանտիմետր հեռավորության վրա, զանազան խորությունների: Ակոսի խորությունը կախված է ծառերի սերմի տեսակներից:

4. Հաճախ ծառերի սերմերը նույն տարին չեն բուսնում: Աշնան ցանած սերմերն ել, յերեմին նույնպես գարնանը չեն բուսնում, կամ բուսնում ե նրանց փոքր տոկոսը: Ծառերի սերմերի բուսները արագացնելու նպատակով, գործադրվում ե ստրատիֆիկացիա: Ստրատիֆիկացիայի եյությունն այն ե, վոր թրջված սերմերը խառնում են միջակ խոնավություն ունեցող ավազի հետ կամ սերմերը շերտաշերտ ծածկում են ավազով: Գետի լվացած ավազը շատ հարմար ե այդ նպատակի համար: Ավազի հետ խառնած սերմերը բաց արկղներում թողնում են աղատ ողի մեջ, իսկ յեթե ողի աստիճանը 0-ից ցած ե, արկղները տեղավորում են շենքում, վորի ջերմությունը 0-ից մի քանի աստիճանի


բարձր եւ Սերիթ ընդ մերթ արկղների վրա  
ջուր են ցանում: Սերմերը ժողովելու որից



Նկ. 4

այդ ձեռվլ պահելու և զարնանը ցանելու դեպքում բոլորը հավասարաչափ և արագ կը ուսմէն: 5. Կաղնու պատւղները (կաղինները) ժողովում են հոկտեմբեր նոյեմբերին: Առաջին 5 - 10

արում թափված կաղիններ չպիտի ժողովից  
վորովնեան վերջիններս առվարտար վշացած  
են լինում: Ժողովելուց հետո կաղիններն անհրա-



Նկ. 5

ժեշտ ե չորացնել, բայց վոչ այնքան, զոր  
կեղեր բլթակից պոկիի նրանից հետո կաղին  
ները կարելի յե ցանել: Գարնանը ցանելու հա-  
մար կաղինները պահպում եմ իմաժամանակ սարա-  
տիֆիկացիալի յեն յենթարկվում խոնավ ավագի  
մեջ: Փորում են 1 մետր լայնությամբ, 0.3  
մետր խորությամբ և անհրաժեշտ (միենուն և,  
թե վորքան) յերկարությամբ փոս: Փոսի հա-  
տտակին լցնում են 5 սանտիմետր հաստությամբ

խոնավ ավագի շերտ, վրավից նույն հաստության կաղինի շերտ և այն, մինչև վերջին (վերին) աշխազի շերտը։ Կաղինի շերտերը փոսում 4 ից ավել չպետք է լինեն։ Ողանցքի համար միքանի տեղ նեղ անցքեր են բաց անում մինչև փոսի հատակը։ Կաղինը ցանում են ակոսներում։ Յուրաքանչյուր ակոսի մեջ տեղափորում են 50 կաղին՝ կողքի վրա, այնպես, վոր հողը նրանց ծածկի 5—8 սանտիմետր հաստությամբ։ Վորպեսզի թոշունները չհանեն ու չտանեն կաղինները, լավ ե թումբերը ծածկել խորլա կամ այլ տեսակ ծածկոցով մինչև կաղինների բունելը (մոտավորապես 40 որ), վորից հետո ծածկոցները վերցնում են։

6. Սոճու կոները ժողովում են ձմեռը (հունվար-փետրվար)։ Սերմերը կոներից դուրս հանելու համար կարելի է ոգտվել հատուկ սերմ չորացնող գործիքներից։ Ալյուսի գործիքներ չլինելու դեպքում կոներն ուղղակի փովում են շորի վրա արեի տակ, մինչև վոր սերմերը թափվեն։ Հարմար ե ամեն տեսակետներից սոճու սերմերը ցանել նույն գարնան։ Մինչև ցանելը սերմերը կարելի յե պահել չոր տեղ, տուպրակում։ Ստրատիֆիկացիա սերմերը չեն պահանջում։ Բուսներն արագացնելու համար ցանելուց 1—2 որ առաջ սերմերը թրջում են ջրով։ Սոճու ակոս-

ները կարելի յե միմրանցից 15—20 սանտիմետր հեռավորության վրա շինել, ուրաքանչյուր ակոսի մեջ պիտի լցնել 2—2 $\frac{1}{2}$  գրամ սերմ և փոել հավասարաչափ ամբողջ ակոսում։ Ակոսի խորությունը լինելու յե 1—1 $\frac{1}{2}$  սանտիմետր։ Ցանելուց հետո ջրում են և ծածկում խորով (փսխաթ) կամ մի այլ ծածկոցով։ Բուսակները յերեալիս՝ ծածկոցը հեռացնում են և փոխարինում վահանով։ Վահանն ամրացնում են թեք ձեռվ բուսակներին արելից պաշտպանելու համար։ Յերաշտի դեպքում, յեթե բուսակներն սկսեն ջրի պակասությունից ընկածվել, սավերն անհրաժեշտ է շատացնել, յեթե այդ ել չոգնի՝ անհրաժեշտ է ջրել։ Վահանները շինում են հասարակ տախտակի բարակ կտորներից կամ յեղիքներից։ Վահանների լանությունը հավասար է 1—1 $\frac{1}{4}$  մետրի, իսկ յերկարությունը՝ 2 մետրի։

7. Սովորական հացենու սերմերը ժողովում են աշնանից մինչև ձմեռվա առաջին կեսը։ Աշնանը ցանելու դեպքում սերմերը բուսնում են առաջիկա գարնան, իսկ գարնանը ստրատիֆիկացիայի չենթարկված սերմեր ցանելու դեպքում՝ ալյուսի բուսնում են հետևյալ գարնանը։ Այդ պատճառով ել գարնանը ցանելու դեպքում սերմերն անհրաժեշտ է ստրատիֆիկա-

ցիայի լենթարկել լեթե ցանկալի յե, վոր նըսնք բուսնեն ևունի գարնանը։ Ստրատիֆիկացիան այս գեղքում կարելի յէ կատարել ևահ հետիւալ փորձնական կարգով ստացված ձեռվ. սեմերը լցնում են աշնանից, մոտ 20 սանտիմետր խորություն ունեցող փոսի մեջ, արև տեղում և ծածկում են ավազով, հողով կամ ծղնուառվ։ Զմեռը ձյունի և վաղ գարնանը անձրեխ բացակայության գեղքում, թաղած սերմերը պարբերաբար ջրում են։ Յերբ գարնանը սերմերն սկսեն արմատներ արձակել՝ անհրաժեշտ ե ցանել, հակառակ գեղքում նըսնք փշանալու յին։

Հացենու սերմերը թողնում են մարգերում 1—2 տարի։ Ակոսների խորությունը լինելու յէ 4 սանտիմետր, լուրաքանչյուր ակոսի մեջ հավասարաշափ փռում ես 10 գրամ սերմ։

8. Ամերիկական հացենու սերմերը ժողովում են աշնանը և ամբողջ ձմեռվաընթացքում, Ստրատիֆիկացիայի կարիք չկա։ Սերմերը պահում են չոր տեղերում, տոպրակի մեջ։ Ցանելու ձեր նույն ե, ինչ վոր ստացինք սովորական հացենու համար։

9. Թղկիների սերմերը ժողովում են աշնան։ Սերմերը համակերց հետո անմիջապես թափվում են, հետեւաբար անհրաժեշտ ե հետեւ ժամանակը չկորցնելու համար։ Սերմերի ստրատիֆիկացիան

և պահելու ձևերը նույնն են, ինչ վոր ստացինք սովորական հացենու համար։

Ամերիկական թղկիի սերմերը ստրատիֆիկացիա չեն պահանջում։ Սերմերը ժողովերու, պահելու և ցանելու ձևերը նույնն են, ինչ վոր ստացինք ամերիկական հացենու համար։

10. Թղենիների սերմերը համարում են մարմին։ Առաջին հերթին ցած թափվող սերմերը վատ և փուչ են լինում, ուստի առաջին հերթը պիտի բաց թողնել և ժողովել յերկրորդ հերթին թափվող սերմերը։ Թղենիների մարգերի հողը պիտի մշակել շատուշիմ։ Ակոսների խորությունը լինելու յէ 2 սանտիմետր և լայնությունը՝ 4 սանտիմետր։ Ցանելուց առաջ մարգը թեթև կերպով թրջում են և յուրաքանչյուր ակոսի մեջ հավասարաչափ 5 գրամ սերմ են փռում։ Սերմերը ծածկում են 1—1 $\frac{1}{2}$  սանտիմետր փափուկ հողով, հետո ամբողջ թումբը ծածկում են ծղնուաներով կամ այլ ծածկոցով և նորից թըրջում։ Մինչև սերմերի բուսնելը, մարգը չպիտի չորանա, ինչու և ամեն յերեկո, յեթե անձրեցի յեղել, մարգերն անհրաժեշտ ե ջրել առանց չի յեղել, մարգերն անհրաժեշտ ե ջրել առանց ծածկոցները հեռացնելու։ Հենց վոր յերեան բուսակները, ծածկոցներն անհրաժեշտ ե հեռացնել և բուսակներն արեից պաշտպանել վահանակներով։ Լույսի և ստվերի հարաբերությունը հաներու։

վասար ե լինելու 1:1: Հաճախ անձրեներ գարու դեպքում վահանների կարիք չկա: Բուսակներն լեռնալու որից ջրելը պիտի դանդաղեցնել և հետագայում իսպառ դադարեցնել:

Սերմերը մինչև աշունը կամ հետեւյալ գարունը պահելու դեպքում անհրաժեշտ ե լինել մաքուր տոպրակի մեջ և պահել չոր տեղում:

11. Լորենու սերմերը համարում են աշնանը: Սերմերը պիտի ժողովել աշնան և ձմբան ընթացքում: Սերմերը գարնանը ցանելու դեպքում պիտի յենթարկել նախորոք ստրատիֆիկացիայի, հացենու համար նկարագրված ձևով: Ակոսների հեռավորությունը մեկը մյուսից կարելի յե անել 18 սանտիմետր, ակոսների խորությունը հավասար ե 1—3 սանտիմետրի, յուրաքանչյուր ակոսում միմյանց կողքի շարքով դասավորում են 10 գրամ սերմ: Ցանելուց հետո մարդի վրա ջուր են սըսկում ու ծածկում ծղնուառվ կամ այլ ծածկոցով: Բուսակները արելից պիտի պաշտպանել վահանով:

12. Խնձորի և տանձի սերմերն ավելի հարժար ե աշնանը հավաքել վայրի հասած պատղներից: Սերմերը գարնանը ցանելու դեպքում անհրաժեշտ ե նրանց սարատիֆիկացիայի յենթարկել: Ակոսների խորությունը հավասար ե լինելու 1—3 սանտիմետրի: Յուրաքանչյուր

ակոսի մեջ փոել հավասարաչափ՝ 10 գրամ սերմ:

13. Ծիրանի, սալորի, դեղձի, կեռասի և բալի կորիզներն ավելի նպատակահարմար ե ցանել աշնանը: Գարնանը ցանելու դեպքում կորիզները պիտի ստրատիֆիկացիայի յենթարկել աշնանից: Ակոսների խորությունը հավասար ե 2—3 սանտիմետրի, յուրաքանչյուր ակոսի մեջ կորիզները տեղավորվում են մեկը մյուս կողքին կորիզի յերկարությանը հավասար ընդմիջումներով:

14. Բարդենին և ուսենին հարմար ե վոչ թե ցանել, այլ անկել հետեւյալ կերպով. ծառի հյութերը շարժվելուց և բողբոջներն ուռչելուց անմիջապես առաջ կտրում են 1—2 տարեկան մատղաշ շիվեր և անմիջապես տնկում: Յեթե հնարավոր չե անմիջապես տնկել, ապա 1—2 որից հետո անկելու դեպքում անհրաժեշտ ե ընձյուղների չորացած ծալլերից մի քանի սանտիմետր կտրել և խսկուն տնկել:

#### IV. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԾԱՌԵՐ ՏՆԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

1. Տնկելու ծառերը պիտի լինեն մատղաշ — մինչև 3—5 տարեկան:
2. Տնկելու համար ընտրած ծառը հողից գուրս են հանում բրիչով և բանով, զգուշու-

թիամբ փորելով ծառի շուրջը  $\frac{1}{2}$  մետր տրամադիմքի շրջանում։ Փորելիս պիտի աշխատել արմատները չվնասել։ Յեթե արմատները բարակ ծալքերով շատ խորն են գնացել, ապա զգուշությամբ պիտի բահով կտրել բարակ արմատները, այլ վոչ թե թափով դուրս հանել հողից։

3. Քերծված և առհասարակ վեստված արմատները, յեթե պատճական են և սակավ (ընդհանուր քանակության 1-2 տոկոսն են կազմում), պիտի խսպառ կտրվեն մինչեւ արմատի առողջ մասը։

4. Տեղափոխվելու դեպքում հողից հանած տունկիների արմատները պիտի ապահովել չուրանալուց։ Ամենալավ միջոցը՝ արմատները խոնավ մամուռով և մամուռի վրայից շորով (կամ ճլոպով) փաթաթելն է։

5. Յեթե տեղափոխված անկիները խսկույն և յեթ չպիտի անկվեն, այդ դեպքում անհրաժեշտ ե ժամանակավորապես նրանց արմատները սավերում հողի տակ դնել թեք ուղղությամբ, արմատները ցած։

6. Ծառերը անկելուց առաջ անհրաժեշտ ե նրանց արխտները թրջել ջրի մեջ, իսկ յեթե անկելու վայրում մոտեկ առվակ կամ ջուր չկտ, նախորոք այնահեղ դույլերով ջուր պիտի տանել։

7. Տնկելու ծառի ծավալի, չափերի ու ար-

մատների համաձայն վորվում են զանազան խորությամբ և լայնությամբ վասերու հնդհանուր տամամբ փոսերի խորությունը միջին թվով կարելի լին համարել  $\frac{1}{2}$  մետր, իսկ լայնության տրամագիծը՝ մինչև  $\frac{1}{2}$  մետր։

8. Փոսը փորելիս հողի վերին լավ շերտը դուրս ե հանվում մի կողմը, իսկ ցածի վատ շերտը՝ մյուս կողմը։ Արմատները հողի մեջ թաղելիս, հողի վերին լավ շերտը պիտի լցնել ըսկերից՝ ցած, իսկ ցածի վատ շերտը՝ հետո, վերի։ Փոսը լցնելու ամբողջ հողն սնհրաժեշտ ե լավ մաքրել քարերից և այլ ամուր մասերից, փշել, մանրացնել ու փափկացնել ձեռքերով կամ բահով։ Ոգտակար ե փոսը լցվող հողին հին գամաղբ խառնել։

9. Ծառը անկելիս պիտի աշխատել, վորնը արմատները փոսի մեջ տարածեն ուղիղ և ազատ, իբենց բնական դիրքով։ Փոսի խորությունն ու լայնությունը պիտի համապատասխանեն արմատների բնական գիրքի չափերին։

10. Անհրաժեշտ ե խստիվ հետեւել, վորպիսզի ծառի արմատի գզիկը (корневая шейка) այսինքն՝ արմատի և բնի սահմանը, հողով չծածկվի։ Ծառը պիտի նոր հողի մեջ անկվի այն խորությամբ, ինչ խորությունն ունեցել ե հողից դուրս հանելիս, տեղափոխումից առաջ։ Նկատի

պիտի տոնել, վոր նոր տնկած ծառի հողը հետագալում սեղմակելու և նոտելու յե, հետևաբար սնկելիս ծառի արմատի վզիկը 1—2 սանտիմետրը կարսդ և հողի մեջ թաղվեր Այդ դիրքը վորոշելու նպատակով, փոսի վրա հողը լցնելուց առաջ գնում են հորիզոնական դիրքով փայտի կամ տախտակի կտոր: Արմատի վզիկը այդ կտորից 1—2 սանտիմետր ցած պիտի լինի:

11. Տնկելիս ծառը պահում են ձեռքով վորպեսզի նրա արմատները չընկճվեն և տեղափորվեն ազատ, թեթև թափ են տալիս, հողը ցրվում են արմատների մեջ հավասարաչափ և ձեռքով դրուշությամբ սեղմում են, վորպեսզի արմատների շուրջն ազատ անցքեր և դատարկ տարածություններ չմնան. բոլոր արմատները հողի մեջ թաղելուց հետո, հողը փոսի յեզերքներում վոտքով սեղմում են, նորից հող լցնում ու սեղմում, մինչև հողը հավասարվի փոսի յեզերքներին:

12. Յեթե մտազրություն կա ծառը փայտից կապելու, ապա փայտը պիտի փոսի մեջ ամբացնել մինչև ծառի տնկելը, այնպես, վոր փայտը ծառի հյուսիսային կողմում լինի՝ նրան ողի ծալքահեղ փոփոխություններից ու թոփշքներից պաշտպանելու համար: Ծառը կապում են փայտին վոլորած փափուկ ճլոպով, վորպեսզի ծառի բունը չմնավի:

13. Փոօն անհրաժեշտ ե փորել ծառը տընկելիս:

14. Յուրաքանչյուր ծ ու անկելու համար, անհրաժեշտ են յերեք հոգի: Մեկը փորում է փոսը, մաքրում, փափկացնում ու հողը լցնում փոսի մեջ: Յերկրորդը հետևում է ծառի ուղղահայց գրության, խորության, արմատների ընդհանուր դրության՝ փոսի մեջ և տունկը միշտ պահում է ձեռքերի մեջ. յերրորդը փշրում է հողը փոսի մեջ գասավորում և արմատները, սեղմում ե արմատների միջի հողը, հսկում ե, վոր արմատների շուրջը գատարկ տարածություններ չմնան և ավարտում է փոսը լցնելու դորձը:

15. Ծառերը միմյանցից 2—4 մետր հեռավորության վրա պիտի տնկել, իրենց տարիքի և ընդհանուր զարգացման համեմատ:

16. Վորոշ չափով մնաված արմատների և առողջ սաղարթի փոխհարաբերությունները վերականգնելու նպատակով տնկելուց հետո, լու կ է ծառի ճյուղերի ծալքերը կտրել: Յածի ճյուղերը կարելի յե խպառ կտրել:



V. ԼՈԶՈՒՆԳՆԵՐ «ԱՆՏԱՌԻ ՈՐՎԱ» ՀԱՄԱՐ<sup>\*)</sup>

1. Անտառը ժողովրդական անտեսության հիմքն եւ:
2. Խորհրդային Միությունը լերկրագողի անտառների մեկ յերրորդի տերն եւ:
3. Խորհրդային Հայաստանի անտառները լերկրի տարածության 8% էն կազմում:
4. Անտառն անհրաժեշտ ե ինչպես հացը, ջուրը, լույսն ու ողլը:
5. Անտառը յերկրագործի հավատարիմ ընկերն եւ:
6. Անտառները ջրի պահպաններ են:
7. Անտառները պաշտպանում են հեղեղատներից:
8. «Անտառի որը» աշխատավորության առողջության պայքարի որ եւ:
9. «Կանաչ ծառերը» թթվածինի գործարաններ են:
10. Վորքան շատ ե կանոչը՝ այնքան քիչ և հիվանդությունը:

\*) Աղայ թարգմանություն „День леса“, ժողովածուից:  
Изд. Центральной Комиссии „Дня леса“ Москва 1924 г.

11. Պատրաստեցեք կանաչ անտառի փոխանորդներ:

12. Անտառը –ժողովրդական գույք եւ, Պաշտպանիր նրան:

13. Անտառը շատ թշնամիներ ունի –յեղիք նրա բարեկամը:

14. Պահպանեցեք անտառի բարեկամ թըռչուններին:

15. «Անտառի որը» ստեղծում ե անտառի բարեկամների բանակ:

16. Ուսումնասիրից անտառը, վորպեսզի կարողանառ այն խելացի ոգտագործել:

17. Պարզեցեք կանաչ անտառի կյանքի գաղտնիքները:

Վոտանավոր լոգունգներ

Սիրից անտառն որորոցից,  
Վոր չվախես լերեք ցըտից:

\*

Յեթե շուրջու անտառ ե,  
Մի վախեցիր վատ բերքից,  
Ով անտառը փըշացնե  
Բոնիր նրա ոձիքից:

\*

Մի հարվածով քո կացնի՝  
Կաղնի ծառը կձգես:

Իսկ թե տնկես մեկ կաղնի,  
Հարյուր տարի պիտ սպասես:

\*

Հինգ ըովելում  
Ծառ կտրես, --  
Բանի տարում  
Կաճեցնես:

\*

Անտառը պահպանիր,  
Անտառը պաշտպանիր,  
Զիտ անտառ — ստեղծիր:

---

## VI ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

### I. Հանդամասչելի գրականություն

\* Захаров, А.—Жизнь леса. 52 стр. 30 к.

”                      Первое знакомство древесиной. 1926 г. 60 стр. 65 к.

\* Керн, Е. Е.—Лес и его богатства. 10 к.

\*                      ”                      Уход за лесом. 20 к.  
”                      ”                      День леса. 15 к.

Магницкий, С.—Лесопропаганда в избочитальне, 1926 г. 38 стр. 20 к.

Жирнов.—Какие заработки может иметь крестьянин в лесу.

Дамберг, Е. Ф.—Лесовод-любитель (буков к сбору семян, шишек и т. п.) 64 стр. 40 к.

Данилов, Е.—Лес и урожай. 1926 г. 29 стр. 5 к.

»                      Лесонасаждения для борьбы с пожарами. 1926 г. 32 стр. 5 к.

День леса и школа.—Сборник статей. 1925 г. 114 стр. 60 к.

1) \*-ով նշանակված են ավելի անհրաժեշտ ու կորեկտ ձևութափները:

- \*Дроздовский, Е. С.—Что должен знать рабочий и крестьянин о лесах СССР и их доходности. 1925 г. 60 стр. 20 к.
- Налетов, А. Ф.—Юным друзьям леса. (Лесная христоматия). 1925 г. 148 стр. 75 к.
- П. Смолин.—Подготовка к «дню леса». 68 стр. 30 к. 1927 г.
- Исаев, С.—День леса. 1927 г. 63 стр. 30 к.
- \*Морозов И. —Что надо знать о лесе и лесном хозяйстве, 1926 г. 43 стр. 30 к.
- Под'япольский, Н.—Лесохозяйств. уклон в школе 1927 г. 87 стр. 90 к.
- Семенов, А. С. Лес, что он дает человеку. 1927 г. 112 стр. 70 к.
- Сажин, Д. К.—Почему надо рубить лес по расчету. 1920 г. 24 стр. 15 к.
- Софронович, Б. М.—Основы организации провильного лесного хозяйства. 1925 г. 47 стр. 35 к.
- Ткаченко, М. Е. Какую пользу приносит лес. 1926 г. 46 стр. 15 к.
- \*Ա. Մուսեղյան. —Անտառը պետք է հաշվով կտրել. 1927թ. թ. 19 յերիս. 5 կող.

## 2. Գիտական գրականություն

- Керн, Э. Э.—Очерки по лесоводству. 1925 г. 297 стр. 2 р.
- Морозов, Г. Ф.—Лес, как растительное сообщество, 45 стр. 30 к.
- » Рубки возобновления и ухода. 1927 г. 88 стр. 90 к.
- \* » Учение о лесе.
- Степанов, Н. Н.—Древесные семена, их свойства, сбор и хранение. 1925 г. 104 стр. 75 к.
- » Уход за лесом. 1925 г. 35 сгр. 20 к.
- Сергеев, П. Н.—Лесная таксация. 1924 г. 114 стр. 1 р. 35 к.
- Соколов, П. А. О рубке леса. 1916 г. 22 стр. 15 к.
- Վերոհիշյալ բոլոր ուսուերեն լեզվով գրքերը կարելի յե պատվիրել հետեւյալ հասցենով. Լенинград, 28. фонтанка, 10. Книжному складу Государствен. Сельско-хозяйственного музея
3. Սուրեն Բերում Ենե այն Խոզվածերը. Գորդուս Են Տեսել Խ. Հայոստանի անտառակերը. «Եռոր Աշխարհ» ամսագիր, հոկտեմբեր. 1922թ.
- Ա. Թադևոսյան. Հայաստանի անտառակերը. «Եռոր Աշխարհ» ամսագիր, հոկտեմբեր. 1922թ.

Գ. Յարուշենիլու.—Անտառների նշանակությունը Հայաստանի տնտեսական կյանքում: «Գյուղատնտեսական Կյանք» 1925 թ. № 5.

Ա. Մուշելյան. — Յերևանի շրջակայքի անտառաբուծման առթիվ: «Գյուղատնտեսական Կյանք» 1925 թ. № 5.

Ո. — Խորհրդային Հայաստանի անտառաշխատակիցների լերկրորդ համագումարը: «Գյուղատնտեսական Կյանք» 1925 թ. № 5.

Մուշելյան Ա. — Ինչպես շահագործել Հայաստանի անտառները. «Գյուղատնտեսական Կյանք», 1925 թ. № 7.

Թադէվոյան Ա. — Արոտավայրերի ոգտագործության կարգավորումը անտառային տնտեսության տեսակեալից: «Գյուղատնտեսական Կյանք» 1925 թ. № 10.

Մուշելյան Ա. — Անտառային որենսգորքի խախտումների մասին: «Գյուղ. Կյանք» № 10, 1925 թ.

Յարուշենիլու Գ. Գ. — Անտառներում անառուններ արածացնելը: «Գյուղ. Կյանք» 1926 № 4.

Յարուշենիլու Գ. Գ. — Գյուղատնտեսության և անտառատնտեսության փոխհարաբե-

րությունները. «Գ. Կ.» 1926թ. № 4. Սերեբրակյան Ա. — Հայաստանի անտառները, նրանց համարական ինքանությունը և նպատակահարմար շահագործման անհրաժեշտությունը. «Գյուղ. Կյանք» 1926 թ. № 5 և 6.

Յարուշենիլու Գ. Գ. — Ինչ պետք է իմանա անտառի մասին Հայաստանի ամեն մի քաղաքացի: «Գ. Կյանք» 1926 թ. № 5. Յեղինելյան Ա. — Անտառային տնտեսությունը և Հայաստանում: «Գյուղ. Կյանք» 1926 թ. № 9.

Թադէվոյան Ա. — Ի. Հայաստանի անտառների տագնապը: «Գյուղ. Կյանք» 1926 թ. 10 և № 11.

Յարուշենիլու Գ. — Հայաստանի սոճու և կաղնու անտառների հետազոտական արդյունքները: «Գ. Կյանք» 1926 № 12.

Մուշելյան Ա. — Հայաստանի Անտառային Տնտեսությունը 1925—26 թ.: «Գյուղ. Կյանք» 1927 թ. № 1.

Յարուշենիլու Գ. — Անտառամշակութային գործը Հայաստանում և նրա զարգացման հեռանկարները: «Գ. Կ.» 1927 թ. № 1.

Յարուշենիլու Գ. — Ինքնազլուխ ծառահատումները անտառում և նրանց պատճառ-

- Նելր: «Գյուղ. Կյանք» 1927թ. № 3.  
Յարուժենկո Գ.—Հայաստանի կազմին. «Գ.  
Կյանք» 1927թ. № 5.
- Մուսելյան Ա.—Կաղնու տնտեսությունը  
Հայաստանում: «Գ. Կյանք» 1927 № 6.
- Մուսելյան Ա.—Մշամիկյանի անվան սո-  
ճութը: «Գյուղ. Կյանք» 1927 № 8.
- Թադէվոյան Ա.—Հաճարին և նրա նշանա-  
կությունը Հայաստանի անտառային  
տնտեսության ու արդյունաբերության  
տեսակետից: «Գ. Կյանք» 1927 № 7.
- Մուսելյան Ա.—«Խ. Հայաստանի անտառա-  
յին տնտեսությունը»: «Գյուղ. Կյանք»  
1927թ. № 10—11.
- Серебрякян А.—К лесоводству и лесо-  
хозяйству в ССРД «Экономич. Вест.  
Армении», июль-август 1927 г. № 4.
- Мушегян А.—О зимовниках и пастьбе  
скота в лесах ССР Армении. «Эко-  
номич. Вестн. Армении», 1927 г.  
март-апрель. № 2 (20).
- Проф. Виноградов-Никитин.—Иджеван-  
ское лесничество Котикендское,  
Деликанское, Шамшадинское л-во,  
«Экономич. Вестник Армений»,  
№ 2 и 3 27 г.

## ԳԼՈՒԽՆԵՐԻ ՑԱՆԿ

	Եջ
Հեղինակից . . . . .	3
I. Մարդը և անտառը . . . . .	5
II. «Անտառի որվա» նշանակությունն ու խնդիրները . . . . .	12
III. Արտագրական աշխատանքներ . . . . .	19
IV. Նախապատրաստական աշխատանք- ներ . . . . .	27
Ա. Ագիտացիա և պրոպագանդա . . . . .	28
Բ. Գավառագիտական ուսումնա- սիրություն . . . . .	38
Գ. «Անտառի որին» մասնակցող- ների նախապատրաստումը . . . . .	41
Դ. Հողամասի, նյութերի և գոր- ծիքների նախապատրաստու- թյունը . . . . .	46
Ե. «Անտառի որվա» ժամանակը . . . . .	48
V. «Անտառի որվա» կազմակերպու- մը . . . . .	50
VI. «Անտառի որվա» հետևանքների հաշվառումը ու ամրացումը . . . . .	63

## ՀԱՎԵԼՎԱԾ

I.	Թեղիսմաներ «Անտառի որ» նյութի ժամկն . . . . .	66
II.	Ցուցմունքներ գեկուցողին . . . . .	70
III.	Գործնական ցուցմունքներ սերմեր ցանկու վերաբերյալ . . . . .	71
IV.	Գործնական խորհուրդներ ծառեր տնկելու վերաբերյալ . . . . .	81
V.	Լոգունգներ «Անտառի որվա» հա- մար . . . . .	86
VI.	Դրականության ցուցակ . . . . .	89



20493

ԳԻՒՆ Ե 30 Կ.